



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1885 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Թ.

13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1885



Կ. ՊՕԼԵՍ

1885

ԴԻԻԱՆՔ ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Տիգրան	Էֆէնտի	Եռասուֆեան	Ա. Արենաղեք
Յովհաննէս	»	Թորոսեան	Բ. »
Յարութիւն	»	Թիրեաքեան	Գ. »
Յակոբ	»	Գուրգէն	Ա. Արենաղեք
Ստեփան	»	Տամատեան	Բ. »
Միհրան	»	Տէօքմէճեան	Գ. »



Ձեռննաստրեան Դիւան

Մատթէոս Եպիս. Իղմիրեան Արենաղեք
 Գարեղին Վարդապետ Թաթարեան
 Միքայէլ Էֆէնտի Մամիկոնեան

Դաստիարակութեան Դիւան

Գարրիէլ Էֆ. Նորատունկեան Արենաղեք
 Գասպար » Գասպարեան
 Մկրտիչ » Մէղպուրեան

Կալուածոց Դիւան

Յովհաննէս Էֆ. Թորոսեան Արենաղեք
 Միհրան » Զօպանեան
 Նշան » Պօյաճեան

Համարակալութեան Դիւան

Գառնիկ Էֆ. Յովակիմեան Արենաղեք
 Կարապետ » Սըվաճըեան
 Մկրտիչ » Ճանըմեան

Յարաբերութեան Դիւան

Յովհաննէս Էֆ. Նուրեան Արենաղեք
 Համբարձում » Մաղպուլեան
 Ռէլքէոս » Պէրպէրեան

Նախաճեռնութեան Դիւան

Յարութիւն Էֆ. Մէրեմ Գուլի Արենաղեք
 Յակոբ » Պօշնաքեան

Իրաւաստրեան Դիւան

Յովհաննէս Գ. Մկրեան Արենաղեք
 Յակոբ Էֆէնտի Արշակ
 Ղազար » Հովուեան

Խմբագրութեան Դիւան

Կարապետ Էֆ. Խթիւճեան Արենաղեք
 Մկրտիչ » Մէլիքեան
 Համբարձում » Ալաճաճեան

54100.12

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄՆ 1885 ԱՄԻ

ՆԻՍՏ Թ.

13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1885

ՆԱԽԱԳԱՀ. — Սրբազան Պատրիարք Հայր .

ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան Էֆէնտի Եուսուֆեան .

Օ Ր Ե Կ Ե Ր Գ

- Ա. — Համարատուութիւն Աղգ. Կեդր. Վարչութեան Կրօնական Ժողովոյ.
(Շրջանակներէն շինարարներէն)
- Բ. — Տեղեկագիրք Նախաձեռնութեան և Համարակալութեան կրկին Դիւանաց յաղագօ հաստատման մի ընծայարանի .
- Գ. — Խնդիր վերաբնութեան Աղգային Սահմանադրութեան .

Ընդ Նախադահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Ատենապետ Էֆէնտի Ատեանը կը բանայ ժամը 3 1/2ին, ի ներկայութեան ԿՏ Երեսփոխանաց, որոց թիւն ի վերջէ կը յանդի 55ի:

Վարչութեան Կրօնական եւ Քաղաքական Ժողովոց անդամք մեծամասնութեամբ բազմած էին իրենց յատուկ սեղանին շուրջը :

անձնական տկարութեամբ ժողովոյ այսօրեայ նիստէն բացակայ մնալին զրով հաղորդած լինելով Դիւանին, Ատենապետ Էֆէնտի նոցա անուանքն կը հաղորդէ եւ ըստ այնմ՝ իբր օրինական բացակայք՝ արձանադրել կուտայ ի տուժարի ներկայութեան :

2.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԻՆՔ

1.

Բացակայութիւնք

Վաւերացումն Զ. Է. Ե. Ը. ճիստերու ատենագրութեանց

Երեսփոխաններէն՝

Յակոբ	Էֆէնտի	Իւթիւճեան
Յարութիւն	»	Նորատունկեան
Մելքոն	»	Պարոնիկեան
Նիկողոս	»	Թիւլպէնճեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովոյս վեց, եօթ եւ ութերորդ նիստերու տպագիր ատենագրութիւնը ժամանակին բաշխուած լինելով Երեսփոխանացը, զայնս կարգաւ Ձեր ընդունելութեան կենթարկեմ :

Վեցերորդ նստի ատենագրութեան վրայ
ղիտողութիւն ունեցող կա՞յ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՅ. — Նիստ Զ. երես
108, սիւնակ Բ. — Ես ըսած եմ թէ՛ « Ընծա-
յարանի մասին կրօն. ժողովոյ պատրաստած ուս-
մանց ծրագիրն ի՛նչու տպուած չէ, ո՞ւր է. » եւ
Ատենագրիք էֆէնտի ալ կը պատասխանէ թէ՛
« տպագրուած է Ատենագրութեան մէջ, բայց
բրովնետե դուք նոյն միջոցին հիւանդ էիք,
կերելու թէ տեղեկութիւն չունիք ո՛չ ծրագրէն
եւ ո՛չ ալ Դիւանաց տեղեկազրէն » Ես կրկին
ըսի թէ՛ « թէեւ բոլոր ատենագրութիւններն
աչքէ անցուցի, բայց շտեասյ այդ տեսակ ծրա-
գիր մը : » Սակայն յաջորդ նստին, իրենք ալ
համոզուեցան թէ՛ նոյն ծրագիրն չէ տպուած,
եւ հետեւաբար Էրորդ նստի ատենագրութեան
ետին, որոյ վրայ այժմ՝ զիտողութիւն կընենք,
փութացեր են զետեղել տալ զայն :

Պէտք է գիտնալ թէ՛մենք շատ ուշադրու-
թեամբ կը կարգանք ժողովոյս ատենագրու-
թիւններն եւ անհիմն զիտողութիւններ չենք
ըներ :

ՓԱՓԱԶԷԱՆ Ս. ԷՅ. — Նիստ Զ. երես
100, էջ Բ. խօսքս պիտի ըլլայ սապէս. « Եկ-
րորդ նիստի ատենագրութիւնը տակաւին չեմ
ստացած, ինչպէս երկրորդ նիստի ատենագրու-
թիւնն ալ ժամանակին չկրցայ ստանալ, թէ-
եւ կարեւոր զիտողութիւններ ունէի անոր
վրայ : Ուստի կը խնդրեմ՝ եւ այլն :

Երես 103, էջ Ա. 10րդ տող խօսքս սա-
պէս պիտի ըլլայ՝ « Ուստի կը փափաքեմ որ,
ինչպէս ատենանը բացուած պահուն կը նշա-
նակուի, ընդ նախագամուքեամբ Ս. Պատրի-
արք շօր եւ Ատենապետութեամբ Եռուսե-
եան ԷՅեմետիի, նշանակուի նաեւ կրօն. ժո-
ղովոյ այսինքն Գերկայազոցցիքն Էն. Բարդ. ժո-
ղովոյ Ատենապետ ԷՅեմետիիքն Գերկայաքեամբն
ատենանը բացուած է. փասն զի՝ եւ այլն :

Երես 106, էջ Ա. սկիզբի տողը, « Վար-

չութիւնը պատասխանատու պիտի մնայ, » պի-
տի ըլլայ, « Մայր-Դիւանն ըստ ներքին կա-
նոնագրի պարտաւորութիւն ունի յիշեցնել եւ
ուղեղ : »

Երես 109, էջ Բ. առաջին խօսքս վերջին
մասը պիտի ըլլայ սապէս, « Վասն զի վերջա-
պէս հաշուական խնդիր մը կրօնականաց չի
պատկանիր եւ կրօնականք այնքան հաշուոյ
մարդիկ չեն » :

Նոյն էջ, երկրորդ խօսքս իննբրորդ տո-
ղին մէջ պիտի ըլլայ, « Թերեւս խնդիր չընէ-
նք Քաղ. ժողովին յղել, բայց » եւ այլն :

Երես 110, էջ Ա. խօսքս վերջին տողին
մէջ գտնուիք, պիտի ըլլայ գտնուիք :

Երես 114, էջ Ա. ներքեւէն սկսեալ կրդ
տողին մէջ բառէն յետոյ, պիտի ըլլայ. « Ու
ես ալ ըստ այնմ ըրունած էի, մինչ այժմ կը
հասկցուի թէ խնդրը միայն քահանայացու
պատրաստելու համար հաստատուելիք Ընծա-
յաքանի վրայ է, եւ Երեսփոխանութեան կող-
մէ՝ Ե այլն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Եթէ ուրիշ զիտողու-
թիւն ընող չկայ, քուէի կը դնեմ վեցերորդ
նստի ատենագրութիւնն :

Ուրիշ ոչ ոք զիտողութիւն ընելով, Ատե-
նապետ էֆէնտի քուէի կը դնէ Զ. նստի ատե-
նագրութիւնն որ կը ՎԱԽԻՐԱՆԱՅ հանդերձ Ե-
ղած զիտողութեամբք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այժմ կանցնինք Է-
նստի ատենագրութեան : Դիտողութիւն ընող
կա՞յ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՅ. — Նիստ Է. երես
121, սիւնակ Ա. իմ խօսքերս Թիրեաքեան է-
ֆէնտիքի բերանն դրած են, ըսել կուզեմ թէ՛
փոխանակ Ղազարոսեան ըսելու՝ Թիրեաքեան
նշանակուած է : Ասկից զատ, այդ նստի մէջ
տպագրական խել մը վրկպակներ կան, որոց

պատասխանատուութիւնը թէ եւ Դիւանին վըրայ չձանրանար, բայց եւ այնպէս կը խնդրեմ որ ինքն ալ քիչ մը ուշադրութիւն ընէ :

ԹԱԴԵՆՍԵԱՆ Ռ. ԷՖ. — Է. Նիստ, Երես 131 Ա. սիւնակ, իմ խօսքին մէջ մոոցուած է սա մասն, « Յիշեալին վստահելի անձ մը լինելուն կը վկայէ : մեր պաշտօնակիցներէն Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեանն : Այս առթիւ պատշաճ կը համարիմ յաւելցնելու թէ Աղղին եւ իւր Եկեղեցւոյն պատիւը կը պահանջէ որ լըրադրութիւն հեռաւոր վայրերէ իրեն հասած այդ տեսակ լըրեր հրատարակել փութալէ յառաջ, անոնց որոյիսի աղբիւրներէ բղխած ըլլալը որոնէ :

ԱՂԱԲԷԳԵԱՆՑ Մ. ԷՖ. — Այդ ատենագրութեան 131րդ երեսին մէջ է եւ իմ ատենախօսութիւնը : Ինչպէս միւս, նոյնպէս եւ այս անգամ դժբաղդաբար չէ կարելի եղել ըմբռնել իմ խօսքերուն բուն իմաստն, թէ եւ շատ ծանր եւ յստակ կը խօսուի : Այժմ երկար բարակ զիտողութեամբ չեմ ուզեր ժամանակ անցնել, միայն այսքանը կըսեմ որ իմ խօսքիս իմաստներն փոխուած են եւ բնաւ միտքն չհասկցուիր . . .

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ընդմիջելով) Ըստ որին, Աղբիւրեան էֆէնտի, պարտաւոր էք ատենագրութեան մէջ Ձեր խօսից անձիչդ կէտերն ցոյց տալ :

ԱՂԱԲԷԳԵԱՆՑ Մ. ԷՖ. — Բայց խնդրեմ, Ատենապետ էֆէնտի, ինչպէ՞ս կարելի է այժմ ելնել մի առ մի թուել այդ անձիչդ կէտերն :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրիմն գրաւոր յանձնեցէք Դիւանիս :

ԱՂԱԲԷԳԵԱՆՑ Մ. ԷՖ. — Լսած եմ որ շատեր իրենց խօսքերն նիստէն վերջ կը սըր :

բաղրեն : Ուրիմն ինչո՞ւ ինձ ալ չըրկուիր իմ խօսքերս որ մի անգամ աչքէ անցնիմ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ որոյման ժողով, վոյս, Երեսփոխանք կրնան ժողովոյ մէջ իրենց արտասանած բանախօսութիւնքն ուղեւ եւ սրբադրել. բայց սովորութիւն չէ եղած բնաւ որ առանց պահանջուելու, մէն մի Երեսփոխանի խօսքն իրեն յղուի : Միթէ ուղեցի՞ք եւ չորուեցա՞ւ Ձեզ :

ԱՂԱԲԷԳԵԱՆՑ Մ. ԷՖ. — Ձի կրնար գուշակել որ Դիւանադպիրք չպիտի կրնան ըմբռնել իմ խօսքերս որպէս զի պահանջէի :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչ որ է, Երբ դրաւոր յանձնէք Ձեր զիտողութիւններն, Դիւանս ալ զայնս արձանագրել կուտայ սոյն նստիս ատենագրութեան մէջ :

Այժմ ուրիշ զիտողութիւն ընող կա՞յ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Է. Նիստ, Երես 121, էջ Ա. խօսքիս վեցերորդ տողին մէջ պիտի աւելնայ սա խօսքը, « Եւ ամեն ընտրեալք զայդ պահանջելու իրաւունք չի սեպն, վասն զի » եւ այլն :

Էջ Բ. Ա. տող, « Իսկ Թորոսեան էֆէնտի » պիտի ըլլայ, « Թորոսեան էֆէնտիի առաջարկած շնորհակալութիւնն ալ այդ սովորութեան հետեւելով է, մինչ իւրաքանչիւր անհատ՝ ազգային պաշտօն մը յանձն առնլով իւր պարտականութիւնը կատարած կըլլայ » :

Երեք 127, էջ Բ. առաջին տողէն մինչեւ վեցերորդ տող՝ այսպէս պիտի ըլլայ. « Իրաւ է թէ Սահմանադրութեան հաստատութեան թուականէն յետոյ զանազան համարատուութիւններ մատուցած են ժողովիս, եւ 1870 թուականէն յետոյ զանազան առթիւ եղած հարցմանց եւ հարցապնդմանց շնորհիւ ստանակի համարատուութիւններ կատարուած են : Բայց այս տեսակ տարեկան համարատու-

թիւն մը քննութեան առնել չէինք յաջողած , կտտ աշխատեցանք որ համարառութեան ըսկզբունքն ընենք , սակայն ուստրուան պահուած է եղեր , ինչ եւ է եւն : »

Գրդ տողին վերջը պիտի աւելնայ , « թեբութեանց վրայ » :

Երես 128 , էջ Բ . ներքեւէն սկսեալ Տրդ տողին պարբերութիւնը պիտի ըլլայ սապէս . « Ես Հաճընոյ ամուսնութեան պատմութիւնը հրատարակող թերթին բան մը չեմ ըսեր , զի ինքն ալ ուրիշէն առած էր այդ տեղեկութիւնը . բայց անոր վրայ հիմնած իւր տեսութիւններն , մանաւանդ Կիրակոս Սրբազանի մասին պատմութեան հրատարակել բնուեների չնն : Արդէն Հաճընոյ խնդիրը ծանրացնող , եւ համայն տիեղերի մէջ արձագանք տուող մասն այդ Եսիսկոպոսին համար վրուցուածներն էին , մինչ այժմ հաստատուած է թէ՛ ատոնք ուտ են բոլորովին եւ զրպարտութիւն . եւ հրատարակող թերթին անգամ այդ մասին չի պնդեր » :

Երես 129 , ամուսնական խնդրոց մասին իմ խօսքերս կարի յապակեալ կը դնենմ , զորս ուղղել չեմ վուծար , զի առիթ պիտի ունենամ կրկին խօսելու նոյն նիւթին վրայ վիճաբանութեան շարունակութեան պահուն , ինչպէս նաեւ Տ . Խորէն Սրբազանի տուած բացատրութեան ինչ ինչ կէտերուն վրայ , զորս պակաս՞ կամ աւելցած կը նկատեմ :

Երես 132 , էջ Բ . խօսքս այնպէս խմբագրուած է , իբր թէ ես ըսած ըլլամ որ « Եկեղեցականք միշտ վոյթ ունեցած են ուսեան եւ հմուտ վարդապետներ հասցնելու համար » : Ես այս տեսակ բացարձակ գաղափար մը չեմ ունեցած : Աճապարանօք խօսելուս հետեւանօք լաւ ըմբռնած չէ իմ խօսքիս իմաստը , ուստի ուրիշ առթիւ նոյն նիւթին վրայ իմ համոզումս եւ որոշ կարծիքս կը յայտնեմ :

Ուրիշ զխտողութիւն ընող չլինելով , Ատենապետ Էֆէնտի բուէի կը դնէ Է . նստի առենազրութիւնն որ կը վ.Ա.Խ.Բ.Ա.Ս.Ա.Ս.Ս հանդերձ եղած զխտողութեամբ :

Ազարէգեանց Մ . Էֆէնտի ձեռնպահ կը մնայ սոյն քուէարկութեան մէջ :

Ատենապետ Էֆէնտի նոյնպէս Ժողովոյ ընդունելութեան կենթարկէ Ը . նստի առենազրութիւնն որ կը վ.Ա.Խ.Բ.Ա.Ս.Ա.Ս.Ս առանց ո եւ է զխտողութեան :

3 .

Յայտարարութիւն Ազգ. Վարչութեան

ՆՈՒՐԵԱՆ Յ . ԷՅ . — (Ատենապետ Քաղ. Ժողովոյ) Կաթողիկոսական հաստատման վերաբերեալ պաշտօնական գրութիւնը հասած լինելով Եջմիածնէն , Վարչութիւնը նկատողութեան առած է զանոնք եւ պիտի ներկայէ Պատկ. Ժողովոյդ , որոյ կը վերաբերին . սակայն կը խնդրէ որ մասնաւորօր մը որոշուի դո՞ւն փակ նիստ մը կազմելու համար , վասն զի ինչ ինչ նկատողութիւններով եւ Սրբազան Պատրիարք Հօր հետ խորհրդակցութեամբ , յարմար դատուած է դռնփակ նստի մէջ միայն հաղորդել այդ պաշտօնադրերը :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅ . — Տարակոյս չկայ որ երբ Վարչութիւնը կը խնդրէ , պէտք է որ մ'որոշել եւ դռնփակ նիստ ընել այս խնդրոյն համար :

ՓՈՒՍԱԶԵԱՆ Ս . ԷՅ . — Ինչո՞ւ այսօր չը լինի եւ ուրիշ օրուան թողուի ,

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅ . — Վասն զի Կաթողիկոսական խնդիրն կանխաւ Օրակարգին մէջ նըշանակուած չլինելով , բացակայ Նրեսիտիտանք յետոյ բողոքելու իրաւունք կրնան ունենալ , աւարկելով որ իրենց կանխաւ իմաց չտրուելով խնդիրն յուզուեր եւ որոշում տրուեր է :

ՄԵՐԵՒՄ-ԳՈՒՂԻ Յ . ԷՅ . — Վարչութեան դռնփակ նստի առաջարկութիւնը չապ

օրինաւոր է . միայն , որովհետեւ ամենքս ալ լըուած ենք այս խնդրով , կառավարկեմ որ մօտ օրուան մը համար նշանակուի այդ նիւտը , օրինակի համար , յառաջիկայ Ուրբաթ աւուր համար , եթէ կարելի է :

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՅ. — Ես կառավարկեմ որ զոնիակի նիստն փոխանակ ութ օրէն՝ տասըն եւ հինգ օրէն դումարենք , եւ միանգամայն էջմիածնէն եկած այդ պատճառով ղթերն նախ յղուին Նախաքննիչ Դիւանին , որ սոյն ժամանակամիջոցի մէջ խնդիրն ուսում նախընտրով , մեզ տեղեկագրէ եւ մենք ըստ այնմ մեր որոշումը տանք :

ԳՈՒՐԳԵԱՆ Յ. ԷՅ. — Ի՞նչպէս կարելի է որ այդ թղթերը ժողովու չներկայացուած , Դիւանի մը յղենք :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅ. — Խնդիրը պարզ է . այս ժողովու առջեւ եկած որ եւ է խնդիր նախ ձեռնհաս Դիւանին կերթայ եւ կանցնի Օրակարգ : Վարչութիւնն այժմ օր մը կուզէ այս խնդրոյն համար եւ զոնիակի նիստ կառավարկէ : Ուստի ժողովոյս անկ է զոնիակի նստի օրըն որոշելով խնդիրը ձեռնհաս Դիւանին յըղել եւ Օրակարգն անցնել :

ԱՂԱԲԵՔԵԱՆՏ Մ. ԷՅ. — Այդ բանն կարելի էր տանն եւ հինգ օր առաջ լինել , բայց ո՞չ այսօր : Անցեալ անգամ երբ ուղեցինք զթաղի այս խնդրով , սուգ է եւ այլն ըսուելով տասն հինգ օր յետաձգուեցաւ , եւ այս ժըմ նորէն յետաձգման խօսքեր կը լինին :

Ազդին եւ Եկեղեցոյն շահերը կը սպահանջեն որ օր առաջ , այսօր լակ , ձեռք առնուք այս մեծ խնդիրն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Կը կրկնեմ Ազաբէգեանց էֆէնտիի խօսքերը :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այդ ստիպողութիւնն , խնդրոյն հեղինակին՝ Վարչութեանը կողմէն չէ պահանջուած :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՅ. — (Ատեմապետ Բաղ. Ժողովոյ) Յանուն Վարչութեան կրօնմ թէ՛ ժողովդ ազատ է իւր ուզած ժամանակը նկատողութեան առնուլ խնդիրը . բայց կըսեմ նաեւ որ Ձեր Վարչութիւնը որոշած է դոքոնիակի նստի մէջ հաղորդել խնդրոյն վերաբերեալ թուղթերը :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅ. — Արդէն կաթողիկոսական խնդիրը մինչև ցարդ զոնիակի նստի մէջ վիճարանուած էր , * եւ անտարակոյս այնպէս պիտի շարունակուի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Այդ ալ ժողովոյս գիտնալու բանն է :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅ. — Աջո՛ւտ , ամենայն ինչ ժողովոյ գիտնալու բանն է , փոխադեան էֆէնտի :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Կաթողիկոսական խնդիրը բնաւ Նախաքննիչ Դիւանի չի կրնար յղուիլ : Այլ սէտք է ձեռնհաս եւ հըմուտ անձինքներէ Յանձնաժողով մը կազմել եւ անոր յանձնել խնդիրը՝ 15 օրէն մեզ տեղեկագիր մը բերելու պայմանաւ :

Շնորհակալ եմ նաեւ Նուրեան էֆէնտիէ , որ կըսէ թէ՛ այս խնդիրն Ազաբէգեան ժողովոյ կը վերաբերի կարգադրել :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅ. — Երկու առաջարկու թիւնք կան . ոմանք կառավարկեն Նախաքննիչ Դիւանին յղել խնդիրն , իսկ Ղազարոսեան էֆէնտի կառավարկէ յատուկ Յանձնաժողով մը ընտրել եւ 15 օրեայ պայմանաւ նմա յանձնել խնդիրն :

Դիւանս Ղազարոսեան էֆ.ի առաջարկն

ալ օրինական կը նկատէ, ուստի պարտաւոր է երկու առաջարկներն ալ ժողովոյդ քուէին ենթարկել :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՅ. — Եթէ ժողովն որոշէ Յանձնաժողով մը կազմել, պատրաստ ենք թղթերն անմիջապէս յանձնել այդ Յանձնաժողովոյն :

ՄԷՐԵԿՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Ես կը կարծեմ թէ այնպիսի կանխահաս կարծիքներ ի յայտ կուգան այժմէն, որոնք խնդրոյն մէջ մտնելէ յետոյ սէտք էր տեղի ունենային : Նախ պէտք է ընդունիլ Վարչութեան առաջարկը եւ ըստ այնմ դանփակ նիստ գումարել որոշալ օր մը. յետոյ այդ նստին մէջ միայն կարելի է յայտնել թէ՛ ինչ սիտի ընենք. խնդիրն նախաքննիչ Դիւանի՞ն պէտք է յղել թէ ոչ յատուկ Յանձնաժողովոյ մը :

Ես տասն եւ հինգ օրէն նիստն գումարեալուն հակառակ եմ, եւ կըսեմ թէ, եթէ կարելի է, յառաջիկայ Ուրբաթ տեղի ունենայ այդ գումարուը :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՅ. — Վարչութիւնը կառավարիչ դանփակ ընել նիստը : Ինքն ազատ է այդ տեսակ առաջարկութիւն մը ընելու, ժողովս ալ ազատ է ընդունելու զայն կամ չընդունելու : Բայց բան մը կայ զօր պէտք չի մտնանք. քանի որ խնդրոյն վերաբերեալ թղթեր եկած են ի Պատրիարքարան, Վարչութիւնը պարտաւոր է ժողովին ներկայացնել զանոնք. ժողովը աւան բանէ առաջ սէտք է կարդայ այդ թղթերը եւ յետոյ խնդիր Օրակարգն անցնէ :

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՅ. — Եւ ես կաւելցնեմ թէ՛ կրնանք այսօր իսկ դանփակ նստի մէջ այդ թղթերը կարդալ եւ ի հարկին խնդրոյն վիճարանութեան ձեռնարկել :

ՊԵԿԵԱՆ Յ. ԷՅ. — Ես ալ կը կրկնեմ

թուղթերը այժմ իսկ կարդալու առաջարկութիւնը, բայց դանփակ նիստն ուր օրէն զուամարել կառավարկեմ :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՅ. — Նորէն կը կրկնեմ յ'անուն Ս. Պատրիարքի եւ Վարչութեան՝ թէ այսօր ո՛չ մի գրութիւն ունիմ բաց նստի մէջ կարդալու :

ԱՂԱԲԷԳԵԱՆՅ Մ. ԷՅ. — Քաղաքական ժողովոյ Ատենապետ Նուրեան էֆէնտի յ'անուն Ս. Պատրիարքի եւ Վարչութեան կառավարիչ Ազգային ժողովը դանփակ ընել, եւ այդ դանփակը իբրեւ պարտք կը դնէ մեր վրայ . . .

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՅ. — (Ընդմիջելով) Իրաւունքն է ըսի, Աշարէգեանց էֆէնտի, եւ ո՛չ թէ պարտք կը դնէ : Կաղաչեմ, բառերու վրայ չը խաղանք :

ԱՂԱԲԷԳԵԱՆՅ Մ. ԷՅ. (Շարունակելով) Այս Կաթողիկոսական խնդիրը միայն մեզ եւ ընտրութեանաց չվերաբերիր, ասիկայ եկեղեցական թէ, աշխարհական ամբողջ ժողովրդին վերաբերեալ խնդիր մ'է, համայն Ազգին խնդիրն է : Ուստի ժողովուրդը սէտք է հանդիսատես լինի մեզ եւ տեսնէ թէ իւր սրտին եւ հոգւոյն հետ անմիջական վերաբերութիւն ունեցող խնդրոյ մը մասին ի՞նչ կը խօսուի եւ ի՞նչ կը վճռուի այս տեղ . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — (Ի նայն զանգակի ընդմիջելով) Այդ տեղ կեցէ՛ք : Ձեր այդ նուկատուներն բոլորովն զուրս են խնդրէն, Աշարէգեանց էֆէնտի : Այսօր Վարչութիւնը պարզապէս կուգայ ժողովն արտօնութիւն խնդրել դանփակ նիստ գումարելու համար : Եւ կարծեմ Վարչութիւնն, ըստ մեր ներքին օրինաց, ամէն ժամանակ իրաւունք ունի զընդմիակ նիստ սրահանջելու, ինչպէս նաեւ ժո-

դրոյս ալ ուղած պահուն, որ և իցէ խնդրոյ
համար կարող է դռնխախի որոշում տալ :

ԱՂԱԲԷԳԵԱՆՏ Մ. ԷՑ. — Ազգային ժո-
ղովը կորոչէ, այո, բայց ես ի՞նչ եմ այս
տեղ, Ազգային ժողովոյ մէկ անդամը չե՞մ .
ես կըսեմ թէ նիստը դռնխախ ընելու պէտք
չկայ, ուրիշ Երեսփոխան մ'ալ թող պատաս-
խանէ թէ դռնխախ ընելու պէտք կայ, յետոյ
քուէով կորոչէ : Այս կը պահանջէ օրինաւ-
րութիւն . դուր ի՞նչ իրաւունք ունիք, Ատե-
նապետ եմ՝ ըսելով, խօսքս դռնխախ պէս
կտրելու : Ես ոչ մի տեղ այսպէս Ատենապե-
տութիւն չեմ տեսել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Ես ձեր խօսքին այն թէր
կտրեցի, որ ժողովրդեան ունինդրութեան ի-
րաւանց մասին՝ Սահմանադրութեան և ներքին
կանոնադրի տրամադրութեանց բացարձակա-
պէս կը հակառակի : Եթէ ուղիք, կարող էք
բողոքել ինձ դէմ :

ԱՂԱԲԷԳԵԱՆՏ Մ. ԷՑ. — Ահաւորով կը
բողոքեմ, ես այսպէս բան ոչ մի տեղ չեմ
տեսել : (Շարունակելով) Այս կաթողիկոսա-
կան խնդիրն, կըսէի, Ազգի հոգեկան խնդիրն
է . մենք ծածուկ բան չունինք և չենք կրնար
ունենալ : Ժողովուրդին իրաւունքն է գլխ-
նալ թէ ի՞նչ կընէ իւր ընտրած Երեսփոխանն :

Ուստի ես չեմ կարող ընդունել դռնխախ
նիստ կազմելու առաջարկութիւնը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — Կը ձայնակցիմ
Ազգաբեգեանց Էֆէնտիի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Վերտուն կազարա-
րեմ ձեզ՝ խորհիլ թէ ո՞ր կը տանի գեղ սյդ
վարդապետութիւնը :

ՍՐՎԱՃԵԱՆ Կ. ԷՑ. — Վարչութեան ա-

ռաջարկը խիստ բանաւոր և օրինաւոր կը գըտ-
նեմ . Կաթողիկոսական խնդիրն այն կարգի
փոփոկ խնդիրներն է, որք եթէ դռնբաց
նտրի մէջ վիճարանութեան դրուին, կրնան
տեղի ունենալ այն անակ յայտարարութիւնք
և խօսքեր որոյ ծանրութիւնը կարելի չէ կը-
ռել սյծմէն :

Կը գովեմ Ազգաբեգեանց Էֆէնտիի զգա-
ցումներն ու եռանդը, սակայն պէտք է յիշել
թէ միայն զգացումով չ'որ կը կառավարուին
ազգերն, այլ իրենց իրական շահոց պաշա-
պանութիւնը լուրջ նկատողութեան տանով :

Վարչութիւնը իրաւունք ունի դռնխախ
նիստ պահանջել որ և է պարագայի մէջ յո-
րում հարկ տեսնէ, ինչպէս սովորութիւն է
արդէն ամեն խորհրդարանաց մէջ : Շատ ան-
անգամ կը պատահի որ Երեսփոխանք հար-
ցումներ կազդեն Նախարարութեան որ ամիս-
ներով կը յետաձգէ իւր պատասխանը, չըջա-
հայեաց նկատումներով և չուզեր տալ զայն
հրատարակային նտրի մէջ : Արդ, երբ հըօր
տեղութեանց համար իսկ զայրձեւու այսքան
խոհեմ եղանակներ կան, ո՞ր կը մնայ մեր
ազգին համար :

ԱՂԱԲԷԳԵԱՆՏ Մ. ԷՑ. — Խօսք կուղեմ
պատասխանելու համար Սըլամեան Էֆէնտիի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Խօսքը Թնկրեան է-
ֆէնտիինն է :

ԹՆԿՐԵԱՆ Ա. ԷՑ. — Կաթողիկոսական
խնդրոյն մէջ, ընդհանուր տեսակետով համա-
միտ եմ Ազգաբեգեանց Էֆէնտիի, ըստ որում
խնդիրն հանրային է : Բայց երբ այսօր մեր
ընտրած վարչութիւնն, հանդերձ Ս. Նախա-
գահով դռնխախ նիստ կը խնդրեն, կարծեմ
ժողովը ալ չկրնար չհամակերպիլ վարչութեան
այս առաջարկին :

Կը յիշէք անշուշտ որ նախորդ վարչու-
թեան օրով, երբ վսեմ. Սիմոն սէյ, իրր Ա.

տեսնապետ Քաղ ժողովոյ, Երուսաղիմայ պարտուց բարձման խնդրոյն վիճարանութեան հասարակ ճար, հոս այս ժողովոյս մէջ զոնիակ նիստ խնդրեց, Երեսփոխանութիւնն անմիջապէս համակերպեցաւ :

Հետեւաբար այսօր Վարչութեան առաջարկն ընդունելով՝ կարծեմ թէ՛ բոլորովին ըստ պատշաճի վարուած կըլլանք :

ԱՂԱՔԷԳԵԱՆՑ Մ. ԷՖ. — Ես խօսք ունիմ պատասխանելու համար Սըվաճեան էֆէնտիի որ ինձ ուղղեց իմ ակնարկութիւններն, Սըվաճեան էֆէնտի իմ անուն տալով ըսաւ թէ՛ Աղարէղեանցի բարի զգացումները կը զօովէ եղեր, բայց ազգ մը միայն զգացումներով չկառավարուիր եղեր, հազա իրեն խելքովը կը կառավարուի եղեր, թէ Անգլիոյ Բարլամէնթը այսպէս կընէ եղեր, Ֆրանսական Բարլամէնթն աննկ կընէ եղեր . . . :

(Երախտարութիւն ունկնդիր ժողովրդեան կողմանէ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ի ծայն զանգալի առ. ունկնդիրսն) Ազգային ժողովոյ նիստերուն ներկայ գտնուող Պատ. ազգայինք ամեն ժամանակ իրենց լրջութեամբ և հանդարտութեամբ ժողովոյս արժանիքը բարձրացուցած լինելով, կը ցախիմ որ այս տեսակ միջադէպ մը տեղի կունենայ այսօր : Եթէ արգարև պատահած են երբեմն ցայցեր, մասնաւորայ դործեր կըլած են . . .

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Ընդմիջումով) Եւ կամ այն ատեն ժողովուրդն Ձեր կարծեաց կողմն էր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Շարունակելով) Եւ պարզապէս զեղծումներ՝ որք հետեւողներ չեն ունեցած : Ուստի կը հրատիրեմ ներկայ ժող.

վուրդն չը կրինել այլ ևս իւր այդ ցոյց, յիշելով թէ՛ զոնութիւն կամ զժգոհութիւն արտայայտելու բնաւ իրաւունք չունին, վասն զի այս ունկնդրութեան արտօնութիւնն ժողովոյս կողմանէ պարզապէս շնորհ մ'է որ կը վայելէ, և որ կրնայ զանալ զայն ի հարկին ըստ օրինի: Ուստի ի պաշտօնէ կը յայտարարեմ թէ՛ ես, իբր Ատեհապետ ժողովոյս, թոյլ չեմ կըրնար տալ որ այդ տեսակ ցոյցեր կրինուին երկրորդ անգամ : (Առ. Աղաբեգեանց էֆ.) Կը տեսնէք Աղարէղեանց էֆէնտի, թէ մերթ ընդ մերթ Ձեր խօսքերն ընդմիջելու իրաւունք ունիմ եղեր, վասն զի տեսաք թէ ի նչ հետեւանք ունեցան անոնք :

ԱՂԱՔԷԳԵԱՆՑ Մ. ԷՖ. — Ես ի՞նչ մեղաւոր եմ : Միթէ՛ Ես եմ պատուիրել որ իմ խօսքերուն ծախահարեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ո՛չ, անտարակոյտ, բայց պէտք է միշտ ի նկատի ունենաք թէ ձեր խօսքերն ո՛ր կրնան առաջնորդել համայն ունկնդիրսն :

Ս. ՆԱԽԱԳԱՆ. — Իրեւ Պատրիարք Ազգին և իբրև Նախագահ Պատի. ժողովոյդ՝ կը յայտարարեմ թէ չեմ կրնար յանձնել այս պաշտօնադրերն, եթէ զոնիակ նիստ չգումարուի : Բայց, Եթէ ժողովը պնդէ անստատառ զոնրաց նստի մէջ նկատողութեան առնուլ զանոնք, այն ժամանակ պատրաստ եմ յանձնելու, պատասխանատուութիւնը թողով Երեսփոխանութեանդ վրայ :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Յանուն վարչութեան խօսք կուզեմ :

ԱՂԱՔԷԳԵԱՆՑ Մ. ԷՖ. — Ո՛չ, նախ ևս սխտի աւարտեմ իմ սկսած խօսքս որ ընդմիջուեցաւ, յետոյ կարող էք խօսիլ : (Շարունակելով) Ես չեմ ներկը կըսէի որ ամեն ժա.

մանակ մեր գլխին Աւետարան կարգան թէ այն ինչ ազգը այսպէս կընէ, միւսն այնպէս կ'ընէ : Մենք ո՛չ Պաղղայի ենք, ո՛չ Անդղղայի : մեր Արտական ազգ ենք և մեր կարթողիկոս ընտրութիւնը հոգեկան խնդիրն է լսի . ուստի սէտք չունինք հետեւիլ անոնց : Այլ սէտք է որ մեր Ս. Նախնիքներէն մեզ յանձնուած աւանդները սրբութեամբ պահպանենք և մեր յաջորդաց աւանդենք :

Այսպէս, ամեն անգամ օրինակներ մէջ բերելով, մի՞թէ մեր գլխին Աւետարան կուզեն կարգաւ, կամ թէ բրօկուօ՞ր կուզեն դառնալ : Թող Սըվածեան էֆէնտի այդ աւետարանները ինք իր գլխուն կարգայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ի ձայն զանգակի)
Թոյլ չեմ կրնար տալ, Աղարէգեանց էֆէնտի, որ այդ տեսակ հակասորհրդարանական լեզու մը գործածէք որով և միրասորէք Ձեր միւս պաշտօնակիցներն : Եւ թէ շարունակէք այդպէս, սխիտ սրտառուրիմ ի կարգ հրատարակ զՁեզ :

(Մեծ յուզում)

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Վարչութիւնը զարմանօր կը տեսնէ որ Երեսփոխան Տեարց մէջ կը գտնուին ոմանք որ տարբեր կերպով կը նկատեն դոճկակ նստի առաջարկը : Բայց սէտք է զխոնալ թէ Վարչութիւն և Երեսփոխանութիւն՝ իրր տարբեր մարմիններ նկատուլ չէ : Վարչութիւնն ալ Ձերն է, Պատրիարքն ալ Ձերն է, և թէ նորա, Երեսփոխանութենէք տարբեր կերպով չեն կարող մեկնել Ազգին շահերը :

Գերկայ խնդրոյս մէջ, Պատրիարք և Վարչութիւն մտածեցին որ դոճրաց նստի մէջ գուցէ տեղի ունենային այն տեսակ խօսքեր որք միասակար դատուին, ուստի և այն իրաւամբ, զոր կուտայ մեզ ներքին Կանոնադիրը, դոճրակ նիստ կը պահանջենք :

Աղարէգեանց էֆէնտի մեզ կը խօսի այն կերպով՝ իրր թէ մէկ կողմ թողով բաղարաւ կիրթ ազգաց օրինակները, սրտմուրթեան մէջ անօրինակ ընթացքի մը հետեւինք, ինքեկան ազգ ենք ընելով : Եւ ի՞նչ, մի՞թէ կուզուի այն տեսակ դրութիւն մը յառաջ բերել որ Պատրիարք ալ չըլլայ, Վարչութիւն ալ չըլլայ, ամէն կարգ ու կանոն վերցուի : մի՞թէ կուզուի առանց շրջանայեցութեան, աշէն ու ձախէն խօսիլ, ամէն ուրեք ուր որ ամբոյս մը զըտնուի, ժողովաբանութիւն շահելու փախաքով : Ո՛չ, այդ չենք կրնար ընդունիլ մենք, Աղարէգեանց էֆէնտի, և չենք կրնար հաւանիլ որ խառնակութեանց թատր մը դառնայ այս ժողովս . . . :

ԱՂԱԲԵԳԵԱՆՅ Մ. ԷՖ. — Լաւ Վարչութեան մը պատկերը կը հանդիսանայ Նուրեան էֆէնտին : (Առ Ատենապետն) Ատենապետ էֆէնտի, ի կարգ չը հրաւիրէ՞ք Վարչութեան Ատենապետը, բանի որ պահ մ'առաջ զիս կուզէք հրատարակ :

(Այս պահուս յուզում և շիտթութիւն կը տիրէ ժողովարանին մէջ . — Ատենապետ էֆէնտի ի ձայն դանգակի բարեկարգութիւնն վերահաստատելով, խօսք կուտայ Փախաղեան էֆէնտիին :)

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Վարչութիւն մը միշտ իրաւունք ունի պահանջելու որ նիստը դոճրակ լինի, բայց այն բառերով զոր Ս. Պատրիարք Հայրն արտասանեց :

Նուրեան էֆէնտի յանուն Վարչութեան դոճրակ նիստ կը պահանջէ, մինչդեռ Ս. Պատրիարք Հայրն կըսէ որ՝ Եթէ ժողովք որոշէ դոճրաց նստի մէջ կարողալ պաշտօնողներն, կարող է յանձնել զայնս, հետեանոց սպասախանատուութիւնը Երեսփոխանաց վրայ թողլով :

Ուրեմն կը տեսնէք թէ Ս. Պատրիարք Հոր

և Գաղ. Ժողովոյ Ատենապետի յայտարարու-
թիւնք կը տարբերին Արդեօ՞ր Նուրեան էֆէն-
տիի խօսքերն թիւրիմացութեան հանդիպե-
ցան . . . :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Ե՛ս
այդպէս բան չըսի՛, Փառադեան էֆէնտի :

ՓԱՒԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — (Առ. Նուրեան
էֆեցնտի) Խօսքս լաւ հասկցէ՛ք, այդպէս ըսիք,
չըսի՛, այլ ըսի թէ Ձեր խօսքերն թերեւ
թիւրիմացութեան հանդիպեցան :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Ձե՛մ ուղեր. թիւր-
իմացութիւն բառն իմ անուանս հետ մի՛ կա-
պէ՛ք :

(Աղբուկ և յուզումն սաստկանալով, Ս.
Պատրիարք Հօր առաջարկութեամբ, Ատենա-
պետ էֆէնտի տասն վայրկեան դադարի հա-
մար Ատենան վիակել կը պարտաւորի :)

ԴԱԴԱՐԷՆ ՅԵՏՈՅ

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տեսքը, ցուպի է
որ թիւրիմացութեան մը պատճառաւ ժողովոյ
բարեկարգութիւնը պահ մը խանգարեցաւ :
Այս յուզումը որ տեղի ունեցաւ, կարևորութիւն
չունի և ժողովոյս արժանապատուութեան չը
վայելի այսորինակ դէպքերու տեղի տալ :
Ս. Պատրիարք Հօր վրայ ևս շատ տխուր տպաւո-
րութիւն ըրաւ այս դէպքը, զի Ն. Սրբաղնու-
թիւնն ց՛որդ ներկայ չէր գտնուած այս տե-
սակ յուզեալ նստի մը : Իսկ այժմ, որ միտքերն
հանգարտած են, պաղարկելութեամբ խորհինք :

Մեր ներքին կանոնադիրը դռնիակ նիստ
ընելու իրաւունք կուտայ մեզ, մանաւանդ
երբ վարչութիւնը իւր Նախագահով կը պա-
հանջէ զայն : Ուստի, կարծեմ մեզ կը մնայ

միայն ընդունիլ այս դռնիակի առաջարկը և
օր մ՛որդել՝ ձեռամբարձով առանց վէճի :

ՓԱՒԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Գաղարէն առաջ
ինչպէս որ սիտայ, այնպէս ալ կը շարունակեմ
Վարչութիւնը ամէն ժամանակ իրաւունք
ունի այս ժողովէն դռնիակ նիստ ուղեւու :
Սակայն ի սկզբան Քաղաքական Ժողովոյ վսեմ
Ատենապետի բացատրութիւններն սխալ ըմ-
բանուեցան : Ս. Պատրիարք Հայրն իրաւամբ
յայտարարեց թէ՛ Էթէ Երեսօխոսանութիւն
իւր վրայ կառնու հետևանց պատասխանա-
տուութիւնն, պատրաստ եմք յանձնել պաշտօ-
նաթղթերն : Արդ, որովհետեւ ես՝ իբր Երես-
օխոսան՝ և շատերն ալ ինձ նման չեն ուզեր
ստանձնել այս տեսակ պատասխանատու-
թիւն մը, հետևաբար մեր քուէն պիտի տանք
դռնիակի առաջարկին :

Վերջացնելով ուրեմն, կը ձայնակցիմ՝ Մէր-
էէմ-Գուլի էֆէնտիի առաջարկին, որ է՝ ութ
օրէն ի դռնիակ նիստ դուժմորել :

ՁԱՅՆԵՐ. — Քուէ՛, բուէ՛ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ որում քուէ կը
այնչանջուրի, ուստի կը վտրթամ վարչութեան
առաջարկն ձեր քուէին ենթարկել :

Չայս ասելով, Ատենապետ էֆէնտի
քուէի կը դնէ դռնիակ նստի մասին վար-
չութեան կողմանէ ներկայացեալ առաջարկն,
որ ԿԸՆԴՈՒՆՈՒԻ երեքի դէմ ձայնից մեծա-
մասնութեամբ :

Հետևաբար ԿՈՐՈՇՈՒԻ ութ օրէն դռնիակ
նիստ գումարել վսան կաթողիկոսական խնդրոյ :

Յետ քուէարկութեան, Ա. Ատենապետ
Եռասօքեան Տիգրան էֆէնտի հարկադրեալ
լինելով մեկինի ժողովէն, Երկրորդ Ատենա-
պետ, Ռորոտեան Յովհաննէս էֆէնտի կանցնի
ի զլուս Գրեանին :

Օ Ր Ա. Կ Ա Ր Գ

Ա.

Համարատուութիւն Կրօնական Ժողովոյ
(Շարունակութիւն վիճարանութեան)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ ձեռք առնելով մեր Օրակարգի Ա. խնդիրն, որ է Կրօն-Ժողովոյ Համարատուութեան վրայ անցեալ նստին մէջ սխառած վիճարանութեան շարունակութիւնն, կը հրուիրեմ զԵրեւոյթիան Տեարս առ այս խօսք առնուլ :

Տ. Յ. ՎՐԴ. Ա. ՓԱՓԱՋԵԱՆ — Օրինական զիտողութեան մը Համար խօսք կուզեմ :

Նկատելով որ Կրօն, Ժողովոյ Ատենապետ և միանդամայն Տեղեկարբեր Սրբազանն այսօր ժողովէս բացակայ կը գտնուի, կառաջարկեմ խնդիրն յաջորդ նստին թողուլ :

Տ. Յ. ՔԶՏ. ՄԿԻՐԵԱՆ — Կը խնդրեմ Դիւանէն՝ հարցնել Արժ. Հայր Սուրբին թէ՛ յանուն Կրօնական Ժողովոյ կը խօսի :

Տ. Յ. ՎՐԴ. Ա. ՓԱՓԱՋԵԱՆ. — Ո՛չ, իբր պարզ երեւոյթիան՝ իմ անձնական կարծիքս է որ կը յայտնեմ՝ օտ նկատուեով որ, Կրօն. Ժողովոյ Համարատուութեան վրայ՝ Երեւոյթիան Տեարք կողմանէ լինելիք զիտողութեանց պատասխանելու Համար հարկ է որ Տեղեկարբեր Սրբազանն ներկայ լինի :

ՁԱՅՆԵՐ. — Թո՛ղ ներկայ գտնուեր Տեղեկարբեր :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Տեղեկարբեր Սրբազանին բացակայութեան պատճառաւ խնդիրը չենք կարող յետաձգել : Մենք կը

վիճարանինք, Կրօնական Ժողովոյ ներկայ անդամներէն ո՛վ որ կուզէ, թող այն պատասխանէ : Այս Ժողովոյ Հեղինակութիւնը բացակայութիւններէ կախումն չընձար ունենալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսք ուզող Երեւոյթիանք՝ իրացակայութեան Տեղեկարբեր Նոր-Պէ՛յ Սրբազանի՛ կուզե՞ն արդեօք խօսիլ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այո՛, զի լաւ է որ այսօր այդ Համարատուութեան խնդիրն վերջանայ :

ՊԵՅԿԵԱՆ Յ. ԷՖ. — Կարծեմ Երկու տարբեր առաջարկութիւններ կան վիճարանութիւնն ձեռք առնելու կամ շտանելու մասին, և հարկ է, զստ զստ բուէի դնել այդ երկու առաջարկներն :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Ժողովս երբէք լռնազրոյ մը Հեղինակին բացակայութեան պատճառաւ չէ յետաձգած արդէն սխառած վիճարանութիւն մը : Եւ կարծեմ այսօր ալ չենք կարող տարբեր կերպիւ շարժիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովն միշտ իշխանութիւն ունի խնդրոյն վրայ վիճարանելու կամ չվիճարանելու մասին բուէարկութեամբ իւր որոշումն տալու :

Ուստի, Պէ՛կեան է՛ք ի նախի զիտողութեան համաձայն բուէի կը դնեմ խնդիրն :

Ձայս տեսելով, Ատենապետ ի՜ջէնախի բուէի կը դնէ ներկայացեալ երկու առաջարկներն : Եւ Ժողովն 6 բուէի դէմ մեծամասնութեամբ կՈՐՈՇԷ ձեռք առնուլ Կրօնական Ժողովոյ Համարատուութեան վիճարանութեան շարունակութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը մեծամասնութեամբ որոշեց ձեռք առնուլ վիճարան

նաթեան շարունակութիւնն : Եւ որովհետեւ խօսից տուժարին մէջ, անցեալ նիւտէն խօսք ուղղոյ երեսօխանայ անուանքն նշանակուած են, ուստի ըստ օրինի Գիւրան նախ այդ Երեսօխանայ խօսք պիտի տայ :
— Խօսքն Գուրգէն է՞ Գիւրանիին է :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Կրօնական Ժողովոյ Համարատուութեան վրայ անցեալ նստի մէջ Երեսօխանայ կողմէ եղած դիտողութիւնները և Գեր. Տեղեկարէր Արքայանին բացաւ արտօթիւնները լսելէ յետոյ, ես իմ կողմանէ շունժ ինչ աւելցնելիք . միայն նկատելով որ Պատի. Կրօնական Ժողովն միամեայ շրջանին մէջ խզնի մտօք կատարած է իւր պարտականութիւնը, կառավարիւմ վստիկ խնդիրը զոչանակութիւն յայտնելով առ Կրօնական Ժողովն :

ԹՆԿԵՆԱՆ Ա. ԷՖ. — Առ Կրօնական Ժողովն շնորհակալութիւն յայտնելու մասին ես ալ ճիշդ Գուրգէն է՞ Գիւրանի կարծիքէն եմ, վասն զի կը տեսնեմ որ առաջին անգամն է որ Կրօնական Ժողով մը, ըստ Սահմանադրութեան իւր միամեայ Համարատուութեան անդեկադիրն կը ներկայէ զինքն ընտրող Ժողովին, մինչդեռ Հրամարտել Գաղ. Ժողովն այդ տեսակ համարատուութիւն մը չ'արդ չէ ներկայացուցած :

Այս բարէլէ յետոյ, կանցնիմ իմ մի քանի դիտողութեանցս :

Սահմանադր. խնդրոյն մասին, Տեղեկադիրն կրէ թէ՛ « Պէտք է որ եպիսկոպոս մը լինի այն » . բայց ես այն կարծիքէն չեմ որ Տեղադրանն տնպատճառ եպիսկոպոս մը լինի . պիտանուար վարդապետ մ'ալ կրնայ վարել այդ առժամեայ պաշտօնն :

Երկրորդ, զաւով « Ընծայարանի » որոշման, Տեղեկադիրն կը յայտնէ թէ՛ այս խնդիրն Ազգ. Ժողովոյս եկած է : Այո՛, խնդիրն մեր Օրտարգին մէջն է, որոյ զբարձրագոյն մասը յղուած է Քաղ. Ժողովոյ նկատողման, և երբ վերատին հոս դայ, անշուշտ առիթ պիտի

ունենամք խօսիլ վերաբերին : Ուստի չեմ ուզեր ծանրանալ ասոր վրայ, միտն աս չափն դիտել կուտամ թէ՛ պանդուխտ բազանայից միեակի բարեւորման խնդիրն, որ զարձեայ վարչութեան ձեռնհասութեան կը վերաբերի և այս Ընծայարանի խնդրոյն յարակից մասն կը կազմէ, այլ ար չէ՛ր միթէ այն ևս նկատողութեան առնուլ :

Այս անդեկադրոյն վրայ իմ բուն դիտողութիւնս Երակիզի խնդրոյն վրայ է : Կը տեսնեմ որ այս համարատուութեան 3-4 երեսներն այդ խնդրոյն զօհուած է, որ կրնար ամբողջ և համառօտ լինել : Կը ցախիմ որ Կրօնական Ժողովն, Հաճնոյ այս բռնի ամուսնութեան խնդրոյն չափէն աւելի կարեւորութիւն տուած և Ազգային Ժողովոյս ալ բերած է

Տ. Յ. ՎՐԴ. Ա. ՓԱՓԱԶԵԱՆ. — (Ընդմիջմամբ. առ Թնկերեան էՖ.) Բայց ինչպէս կուզէիք որ չըբեկիք : Միթէ նոյն խն Ազգ. Ժողովս չէ՛ր որ հոս խնդիրը բրաւ ատի և առ ի անդեկադրութիւն՝ յանձնարարեց զայն Կրօն. Ժողովոյ քննութեան : Ի՛նչ շուտ կը մտադրին խնդրոյն այս արարողայնէրն :

ԹՆԿԵՆԱՆ Ա. ԷՖ. — Ինչ որ է, իմ համոզումս է՛ այնքան մեծ կարեւորութիւն մը չ'տալ այդ խնդրոյն :

Այժմ վերջացնելով իմ այս մի քանի համառօտ դիտողութիւններս, կառուարիւմ զոչունակութեան բուէ տալ Կրօն. Ժողովոյ բարբօք պաշտօնավարութեան մասին և միանա զամայն Քաղ. Ժողովոյ համարատուութիւնն պահանջելու համար ևս հարկ եղած յանձնարարութիւնն ընել առ որ անկ է :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կրօնական Ժողովոյ Համարատուութիւնն, որ Ժողովոյս անցեալ նստին մէջ քննութեան ենթարկուեցաւ, կարդայիլ : Եւ այդ նստին մէջ էր որ ըսի թէ՛ Կրօնական Ժողովոյ մը կողմանէ առաջին անգամ համարատուութիւն մը երած լինելով :

չնորհակալեաց արժանի է, և թէ, վտարելի էր որ միւս Ժողովներն ալ, ըստ օրինի և ճշտ ղհետէ իրենց համարատուութիւնն բերէին . . :

ՍԸՎԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Ընդմիջելով) Կը ձայնակցիմ ֆախագեան էջի՛նտի՛ն. հարկ է որ Վարչութիւնը իրենց պաշտօնափարութեան համարն տան զիրենք ընտրող այս Ժողովիս :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով) Այժմ մի քանի կարեւոր գիտազութիւններ ունիմ : Այդ նստին մէջ Կրօն. Ժողովոյ Ատե- նապետ Սրբազանը յայտարարած է թէ՛ «Աղ- զային Ժողովոյ և ո՛չ մէկ օրոշումը կարող է Կրօնական Ժողովը պարտաւորել որ ամուսնա- կան գաղտնիքներն երեւան հանէ, ըստ որում նորա խստովանութիւններն են » : Այս այն- պիտի յայտարարութիւն մ'է զոր եթէ լսէի, անմիջապէս պիտի բողոքէի անոր ղհմ : Ինձ կերելի թէ այս յայտարարութիւնն ի վերջոյ սպրդած է Ատենագրութեան մէջ :

(Սոյն պահուն Կրօն. Ժողովոյ Ատենապետ Սրբազան կը մտնէ ի Ժողովատեղին) :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Առ Տ. Խորհն Սրբազան) Կը խնդրեմ, Սրբազան Հայր, անց- եալ նստին մէջ, Կրօն. Ժողովոյ համարա- տուութեան առթիւ, երբ իրը Տեղեկաբեր խօսք տուի, ըսիր թէ՛ վարդապետ մը իրը Տեղապահ զրուերու մտին՝ Երեւոյստանոց կողմանէ եղած քննադատութիւններն իրա-ւացի են : Բայց կը տեսնեմ թէ Ատենագրու- թեան մէջ Ձեր այդ յայտարարութիւնն չէ արձանագրուած :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ. — (Պա- տախանելով) Այո՛, չէ արձանագրուած, վստան զի ես այդ տեսակ մի յայտարարութիւն չեմ ըրած :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ըրի՛ք : Նոյն- պէս ատենագրութեան մէջ Ձեր Սրբազնու-

թեան սա յայտարարութիւնը կայ, Ձեր և ոչ մէկ օրոշումը կարող է Կրօնական Ժողովը պարտաւորել որ ամուսնական գաղտնիքներն երեւան հանեմք, ըստ որում անոնք խստու- վանութիւններ են և պարտին մնալ խստու- վանութեան կիբոյն ներքեւ : » Բայց հոս, այս Ժողովիս մէջ ընաւ այդ տեսակ յայտարարու- թիւն մը չլսեցի . . . :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ. — (Պա- տախանելով) Այդ յայտարարութիւնն ըրած եմ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ, զի եթէ ը- րած ըլլայիք, անշուշտ անմիջապէս պիտի հեր- քէի : Վստան զի ոչ թէ դուք, այլ նոյն իսկ Կրօն. Ժողովն ալ իշխանութիւն չունի ամուս- նական խստովանութիւններն ի հրատարակ հանելու : Բայց միթէ ա՛յդ էր մեր պահանջն Կրօնական Ժողովին, ո՛չ. մենք կըսէինք թէ՛ որ այր որ իւր կիկը կը թողու, և որ կին որ կը հեռանայ իւր այրէն, զոնէ իբր բարոյական պատիժ մը և իբր օրինակ տլոյց, դոցա մէկ վիճակազիրն պատրաստուի Կրօն. Ժողովին և մեզ ներկայանայ :

Միթէ ամուսնական խնդիրներն ազգային չէ՞ն և չէ՞ կարելի տրուած վճիռները և ամուսնացելոց ցուցակը Ժողովոյս հարդրել և տալ ի հրատարակութիւն, որպէս զի Ազգն ալ գիտնայ թէ՛ ինքն կոճի՞ թէ կը նուազի և թէ՛ Ազգ. Կեզք. Իշխանութիւնն ամուսնական խնդրոց մէջ ի՞նչ վճիռներ կուտայ :

Կրօն. Ժողովոյ սա երկու զխտադութիւն- ներն թէ՛ Նախագահի բացակայութեան և զրոտի չգոյութեան սրտաճառաւ չէ կրցած փախարուածին չստի արդիւնաւորապէս գոր- ծել, իրաւացի են : Կը մայթեմ որ Կրօն. Ժո- ղովն այս տարի առաւել եւս օգտաշատ գոր- ծեր տեսնէ, ըստ որում, այժմ մանկը այն- պիտի Նախագահ մը որ կորնի անկին իւր ու- նեցած խոր հմտութեամբ և առաւօտէն մինչեւ երեկոյ իւր սաղատնին զլուխը գտնուելով կա- թող է նոր մշտմ տալ ազգային գործոց :

Ուտոի կը վերջացնեմ, տառաջարկելով որ այսուհետեւ ամեն տարեշրջանի վերջ կրօն-ժողովն, ամուսնական վճառարոյ մէկ ցուցակն բերէ հոս և միանգամայն դատաւարութեան համար ծրագիր մը պատրաստել տայ :

ՂԱՏԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Անցեալ նըստին մէջ երբ կրօնական Քննչաց պատրաստութեանց մասին խօսեցայ, Նոր-Պէյ Արք-բազանն պատասխանեց թէ՛ ի հաշիւ կրօն-ժողովոյ յատկացեալ զրամն չարտիր, որպէս զի կարելի ըլլայ նմա գործել :

Ես, ութ տարեկան տղայ եղած տտեհն կարողցած Քրիստոնէական այսօր ժամացոյցի օղջ մտքիս կը գործն, բայց ցաւելով կը տեսնեմ որ այսօր մեր Ազգային վարժարանաց մէջ կրօնի դատասխանութեան մասին սէտք ել գած խնամքը չարտիր մինչեւ իսկ կարեւորութիւն ալ չարտիր, և կրօն-ժողովն՝ այս գտնացատիւնն իբր պատճառ, միշտ յառաջ կը բերէ իւր գործածութեան յատկացեալ գումարին չվճարուիլն : Եթէ այդպէս է, ապա ուրեմն կրօն-ժողովն ինչո՞ւ իւր իրաւանց տէր չլիանգնեն և չղիտեր Քաղ. ժողովոյ, և հակառակ պարագայի մէջ ինչո՞ւ ուղղակի այս ժողովիս չրողերբ . զի քա է որ սերիջ կարգ մը աւելորդ ծախքերն վերցուին և կրօնական սխտոյնի յատկացեալ գումարը վճարուի : Եթէ մեր կրօնական Հայերն անհատապէս սյա հանջք ունենային, միթէ զայն դանձրու համար ամեն շնորք ի գործ չպի՛տի դնիլն և ի հարկին չպի՛տի զիմիկն բարձրացոյն ամենին : Ինչո՞ւ Քրիստոնէական ուսման տարածմանն համար ալ այս միջոցն ի գործ չեն դնեն :

Ուտոի կառաջարկեմ որ, եթէ այսուհետեւ կրօնական ժողովն նիւթական արգելիի հանգիսի և իրեն համար որչա՛կ վարկը շնորհունի կեդր. Սնտուկին, ուղղակի Ազգային ժողովոյս զիմէ, զի սէտք է զիտնալ թէ կրօն-ժողովն գործելու համար հարկ է որ նախ ինքն իւր իրաւանց տէր կանգնի :

ՔԱԴԻՍԵԱՆ Ռ. ԷՖ. — կրօն-ժողովը ոչ բոլորէ է նաև այն ննջեցելոց վրայ դամբա-

նական խօսելու արտօնել որ ի կենդանութեան անց իւրեանց կտակ բողոք եմ Ազգին ի պայծառութիւն տանն Աստուծոյ եւ յօգուտ հանրութեան :

կրօն-ժողովոյ այն որոշում խիստ բռնաւոր և իրաւացի գտայ, այր վասն գոհունակութիւն կը յայտարարեմ յատենի ժողովոյս, հանգրեմ ի գիտողութիւններով և ստաջարկութեամբ :

Տեսարք Երեսիտանք, կտակը եկեղեցեաց և զօրոցաց պայծառութեան մեծապէս կը նպատէ : Նա կտակարարաց ևս մեծ միութարութիւն կընծայէ, ըստ որում մահուանէ ետք, անմահութիւն ունի արգգեւել յաշխարհի սատ ընդ երկտար : կտակներու արգիւնքով ուրիշ ազգաց մէջ բարուկիր եկեղեցիներ, զօրոցիներ, եկամուտ կը կառուցուին : Եւ սակայն ցաւ ի սիրտ պէտք է խոտտովանիլ թէ, մինչպէս այդ բարեպաշտական և ազգայնաց սովորութիւն յայլս մեծ յառաջադիմութիւն ըրած է, տարարազարար ի մեզ օր ըստ օրէ կը յետադիմէ, և բաղդատմամբ նախնի ժամանակաց, այդ կարեւոր արգիւր վերջերս ցամբելու երես առած է : — Եւ ի՞նչ է ատոր պատճառը, Ինձ թուի թէ ատոր զլիտտօր պատճառը կտակարարաց նուիրական կամք, Թաղային պաշտօնական մարմնոց ըստ արժանւոյն կատարել տալու վոյթն ու հոգ, շտանիլն է : Այս ինչ որդեգրուի՛ բայց բարեպաշտ հայր և մայր իրենց վաղամեծիկ զաւկին յիշատակին համար կտակ մը կընեն այս ինչ եկեղեցեաց, այս ինչ զպրօցիս՝ պայմանաւ որ ամեն տարի Աստուածամայն զիմացի կիրակէն նորահոգեւորն համար պաշտօն մատուցուի : Այն ինչ ծնադասէր որդին իր հօր, մօր յիշատակն անմեռ պահելու զտիկի զիտաւորութեամբ կտակ մը կընէ պայմանաւ որ՝ ամեն տարի այս ինչ տօնին ի հանգիստ հոգւոյ նոցա Ս. Պատարագ մատուցուի : Քահանայք որոշեալ օրեր իրենց պարտաւորութիւն կատարելով Թաղ. Խորհրդարան կը զիմեն իրենց սահմանեալ նուէրն ընդունելու, այսչափ դահեկան Քարողիջ վարդապետին, այսչափ բահանայից դատուն և այսչափ ալ Եկեղեցւոյ միւս պաշ-

տունէից համար. Թաղ. Խորհուրդը (միշտ բա-
ցառութիւնները յարգելով) կը զանան զայդ
կանխորէն նուէր նոցա տարւ, այդ վասն եւ
կեդեցյական դասն եւս սահմանեալ օրեր կը
թեքանոց իւր պարտքը կատարելու և կամ
տրամաց կը կատարէ: Եւ ահա այդպէս ստէպ
նոյն իսկ կտակարարաց կենդանութեան ատեն
նոցա կամքը մոռացութեան կը մատուռի:

Տեսարք Երեսօխտանք, ինչ որ կը խօսիմ
ենթադրութեամբ չէ որ կը խօսիմ, այլ ստոնց
փորձը շատ անգամ տեսնելու դժբողութիւնն
ունեցած եմ, և տեսածներու մի մանրանը
կարն է որ աստ կը դնեմ:

Արդ թէ՛ բարեկոչուտ կտակարարաց նուի-
բական կամքը կատարել տալով՝ նոցա ինչևի
տիտանք ընծայելու և թէ՛ ազգային այդ դիւ-
րատանելի եկամուտ առուել քան երբէք ճո-
խայնելու համար, կուտալարիեմ որ Պատիկ
Կրօն. ժողովն գէթ Սահմանադրութեան հաս-
տատութեան ի վեր, որ 25 տարուան ժամա-
նակամիջոց մ'ի, եղած կտակները տամարի մը
մէջ ամփոփելով՝ նոցա պայմաններու կէտ առ
կէտ գործադրութեան մօտէն հօկե . . .

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — (Ընդմիջելով) Եւ
եթէ կարելի է, կտակարարաց անուանքն հրա-
տարակելով, մօտնաւոր գիրք մը շինուի որ
ամէն հայ ունենայ իւր քով:

ՓԱՌԷՈՍԵԱՆ Ռ. ԷՅ. — (Պատասխանե-
լով) Այո՛, իրաւունք ունիք, այդպէս է, ու-
րում արդէն ես իսկ հաւանած եմ: (Շարու-
նակելով) Կըսէի թէ կէտ առ կէտ գործու-
ցութեան հսկէ և զանոնք չգործադրող պաշ-
տօնական մարմինք պատասխանատուութեան
ենթարիկէ: Բարեպաշտ ազգայինք երբ զայս
տեսնեն, ինքնին կը յորդորուին, ինքնարեա-
բար փափար մը կըզան իրենց գոյնց մի մասն
Ազգին նուիրելով՝ իրենց մահէն ետք՝ ի ծոց
Ազգին արկերու: Եւ ահա յայնժամ կտակաց
թիւ կը բազմապատկի, մեր Ազգն եւ նման
ուրիշ ազգերու, նոցա արդիւնքն կարող կը
լինի նուիրական հաստատութիւններ կանգնե-
լու յօգուտ և ի պայծառութիւն Հայրաստան.

եայց Ս. Եկեղեցւոյ և ի յառաջադիմութիւն
վարժարանաց մերոց:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Կտակաց մասին
Թաղէստան Էֆ.ին կողմնէ կըսած առաջարկու-
թեան բնա հարկ չիպ, վասն զի անոր գործողը-
րութիւնն՝ ըստ Սահմանադրութեան՝ կտակաց
Հոգաբարձութեան կը վերաբերի, որոյ ընտ-
րութեան մէջ, իբրև կրօնական խնդիր, Կրօ-
նական ժողովն ալ մասնակցութիւն ունի:

Ուստի կուտալարիեմ յանձնարարել Այտը-
նութեան որ ընդ հուպ կազմակերպէ այդ Հո-
գաբարձութիւնն և հրաւիրէ զնա որ իւր պաշ-
տօնի պարտականութիւնքն խղճի մտք ի գործ
դնէ:

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՅ. — 1875ին երբ
անորժամարար Երեսօխտան էի, առաջարկե-
ցի որ Կրօնական ժողովը պատրաստէ բերէ
մեզ ամուսնական դատերու համար կանոնա-
ւոր օրինադիրք մը: Տ. Մատթէոս Արքայան՝
կը յիշեմ որ՝ այն ատեն ինք պատասխանեց
թէ՛ Կրօնական ժողովը ամուսնական դատերու
համար օրէնք ալ ունի, սակն բան ալ ունի,
բայց կը ցուիմ որ չունինք եղբք: Ասան զի
եթէ Կրօն. ժողովը մճազրերը ձեռք առ-
նուք, պիտի տեսնենք թէ՛ 0, 90ը որոշ օրէն-
քի մը վրայ հիմնեալ չեն. և եթէ այդ վճիռ-
ները արձակող դատուոր հարց հարցնես թէ՛
ինչ հիման վրայ կուտան զանոնք, ամենքն ալ
կը պատասխանեն թէ՛ իրենց խիղճերնուն հար-
ցնելով կը վճեն: Ուրեմն ամուսնական վէ-
ձերն մ'չ թէ՛ օրէնքի մը համուծայ, այլ խորը
ճով կը դատուին եղբք: Ասիկայ մահացուցիչ
պարտապ մ'ի ընտանեկան կազմակերպու-
թեան համար: Մեծապէս դոհ եմ որ Կրօն-
ժողովն ալ զգացած է Որինադրքի մը պէտքը-
տարակոյ չունիմ ուրեմն որ յառաջիկայ շրթ-
ջանին մէջ պիտի պատրաստէ զայն: Բայց
պէտք չէ մոռնալ դատաւարութեան եղանա-
կը: Շատ անգամ հարցուցած եմ թէ՛ ամուս-
նական դատերու վերաբնութիւնն ի՞նչոյք
տեղի կուեննայ Պատրիարքարանի մէջ, և ինձ
պատասխանած են թէ՛ դատին ենթակայներն

առանց կոչելու, դատին վերաբերեալ թուղթերը մի անգամ ևս աչքէ կանցուիին, և կ'որոշուի թէ տրուած վճիռն օրինաւոր է կամ ոչ, մինչդեռ վերաբննութիւնը ոչ թէ թուղթերն աչքէ անցնելով կը լինի, այլ քննութիւնը կրկնելով:

Ուտոի ևս կառավարիեմ՝ ոչ թէ միայն ամուսնական օրէնք մը, այլ և դատաւարութեան եղանակ մը խմբագրել, վասն զի այս ամուսնական դատերը մեր ընտանեկան և աղքատացին ներքին կեանքը ջլատելու համադամանքն ունին:

ԱՂԱԲԵԳԵԱՆՅ Մ. ԷՖ. — Ամուսնական խնդրոց մասին մեր կրօնական ժողովը շատ լաւ կընէ եթէ մէկ վիճակագիր բունէ եղած ամուսնութեանց վրայ և մէկ վիճակագիր ամուսնութեանց, յարակից պատճառներով և անուսնելով և ամէն տարեշրջանի վերջ, այդ ցուցակն Աղգային ժողովոյն բերէ, որպէս զի կարենանք վերահասու ըլլալ թէ՛ մեր մէջ ամուսնական կտայերն աւելի ամուր կը կտայուին թէ ոչ կը թուլանան:

Այս ամուսնական խնդիրը մեր Աղգուութիւնն փրկող խորհուրդներէն մին եղած է և զոհ եմ որ ըմբռնուած է անոր կարեւորութիւնն և որպիսի՛ մեծ խորհուրդ մը լինելը: Եւրոպան ուրիշ կերպ ըմբռներ է եղել ամուսնական խնդիրն, ատրի մեզ վայժ չէ. մենք Ասիական Աղգ ենք և սէտք է փոյթ տանինք, որ համաձայն մեր եկեղեցւոյ օրինաց՝ ամուսնական ղեկծումներն հետզհետէ նուազին:

ՓՈՒՍԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — (Ընդմիջելով) Մանաւանդ շնորհուր ենք որ պաշտօն և բրախսմա ըսուած քնասակար սովորութիւններն վերնան, որոյ միտի դարձանն է հրապարակային դատասարտութիւն:

ԱՂԱԲԵԳԵԱՆՅ Մ. ԷՖ. — (Պատասխանելով) Այդ վատ սովորութիւններն ոչ թէ միայն հոս այլ և զաւառայ և Ռուսաստանի մէջ ալ տարածուած են:

Ուտոի, ինչպէս ըսի, լաւ կըլլայ որ ամէն տարի մի օրոշ վիճակագիր ներկայանայ մեզ որպէս զի գիտնանք մեր ազգին ներքին ընտանեկան կացութիւնն:

ՊԵԿԵԱՆ Յ. ԷՖ. — Ամուսնաթուղթեանց վիճակագիր մը կուզուի կրօնական ժողովէն. այդ պահանջում իրաւացի է: Բայց կարծեմ թէ այդ ու կին զիրար թողլու համար օրէնք մը ունինք . . .

ՓՈՒՍԱԶԵԱՆ Ս. ԷՖ. (Ընդմիջելով) — Այո՛, առժամեայ բան մը:

ՊԵԿԵԱՆ Յ. ԷՖ. — Ուրեմն այդ օրէնքն կրնայ հետզհետէ փորձառութեամբ կատարելագործուիլ: Հետեւաբար ես կառուցարկեմ այժմ վրակել վիճարանութիւնն շնորհակալութիւն յայտնելով առ կրօն. ժողովն:

ՋԱՅՆԵՐ. — Այո՛, քուէ՛, քուէ՛:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք թէ՛ բազմաթիւ նստարաններէ քուէ կը պահանջուի. ուստի եթէ ժողովը բաւ կը համարի եղած վիճարանութիւնքն, կրօն. ժողովոյ սոյն տեղէն կազիրն Ձեր քուէին կենթարկեմ:

Տ. Խ. ԱՐԲ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ. — Իբր Տեղեկարէր կրօնական ժողովոյ, խօսք կուզեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կրօն. ժողովոյ Տեղեկարէր Տ. Խորէն Սրբազան խօսք կուզէ: Ուտոի Դիւանս կը հրաւիրէ զՆ. Սրբազնութիւն ի բեմ:

Տ. Խ. ԱՐԲ-ԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԷՅ. (Ատենակապետ կրօն. ժողովոյ — Բեմն ելելով) Այս երկիրը անգամն է որ պատիւ կուեննամ խօսիլ ի պաշտպանութիւն Համարատուութեան կրօն. ժողովոյ Աղգ. Կեղր. Վարչութեան,

ստիպեալ ի պարտուց Ատենայեանութեան նո-
րա : Առաջին անգամուն՝ հերքեցի զքննադա-
տութիւնս երեսփոխանաց ոմանց , այնպիսի
հանդարտ հոգեով և լուրջ փաստերով՝ որ նոյն
իսկ ընդդիմութեանս զուսուցանութեանն արժա-
նացայ թէ՛ ժողովոյս մէջ և թէ՛ արտարոյ :
Նոյն հանդարտ հոգեով , և յուսամ թէ՛ ոչ
ընդհատ ընդունելի փաստերով պիտի յաջողիմ
և այսօր ևս հերքել երեսփոխանաց ոմանց ար-
տայայտած կարծիքները :

Հաճոյ ամուսնական խնդիրն վերստին
խնդրոյ նիւթ կը լինի ի կողմանէ երեսփոխա-
նաց ոմանց : Կը զարմանամ թէ է՞ր այսքան
կարեւորութիւն կը տրուի մի այնպիսի խնդրոյ՝
որոյ համար զարժանն անօրինած է արդէն
Կրօն. ժողովն , և որ՝ բռնաւոր չէր առնու
անյարան կարեւորութիւն , իրեւ մի անհատա-
կան խնդիր . . .

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — (Ընդմիջմամբ)
Խնդիրն անհատական չէ՛ , Սրբադաս :

Տ. Խ. ԱՐՔ-ԵՊՊՍ. ՆԱՐ-ՊԷՏ. — (Շարու-
նակելով) Ըստ ձեր գաղափարին՝ ամենայն
անհատական խնդիր կրնայ նկատուիլ իբրև
հանրային խնդիր : Բայց այնպէս չէ՛ : Հաճոյ
ամուսնական խնդիրը՝ ոչ միայն անհատական
խնդիր մի է , որ կը վերաբերի երկուց ամուս-
նաց՝ պակեղեցոյ ի Հաճին քաղաք , այլ՝ խնդիր
է մասնական , վերաբերեալ այնպիսի գաւառի
մը՝ որ չէ ընդ անընդմիջական իրաւասու-
թեամբ Կրօն. ժողովոյ : Աստի և Սա՝ դար-
ձոյց զոյն առ Ս. Կաթողիկոսն Կիլիկիոյ , որոյ
հոգեւոր իշխանութեան ներքեւ կը գտնուի
Հաճին : Նորին Ամենապատուութիւն քննեց
խնդիրն և տեղեկագրեց , ինչպէս զիտէր ,
ծանուցանելով թէ՛ բանի չէ՛ ամուսնութիւնն
կատարեալ ի Հաճին , և թէ՛ պէ՛տք է պատ-
ժուին զբարբոթիչքն որք Արեւելք լրագրի մէջ
այլ ընդ այլոյ կերպիւ նկարագրեցին զայդ
պակաղարութիւն : Հարին հայրն և ընտանիք

բողոքեցին վերջերս առ Կրօն. ժողովն , փո-
խանորդ մի կարգելով : Բայց Կրօն. ժողովն
նկատելով որ՝ եթէ լուծի եղած էր պատկա-
զութիւնն՝ բուն բողոքը պէ՛տք էր գար նոյն
իսկ հարուէն՝ Նարիկէն , որ բուն ամուսնա-
ցուցած կըսուէր , ուստի ի քայ արձակեց
զփոխանորդն , ծանուցանելով նմա՝ թէ՛ յայն-
ժամ և եթէ կընդունի լուծ նմա , երբ ներկա-
յանայ յԱտենան ժողովոյն՝ ունելով ի ձեռին
փոխանորդագիր ի Նարիկէն : Միւս կողմէ՛,
զրեց առ Ամեն. Ս. Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ
որ զբարբոթական գրութիւնքն առ Արեւելք ,
եկած լինելով ի Կիլիկիոյ , և զխաւորապէս՝
ի հօրէ անտի Նարիկիսի , որ այդէ է , իրեն
կիցնայ հրակիրել ի վերայ նոցա օրինոց տրու-
մաղբութիւնքն զըպարտչոյց : Այսուհետեւ
վերջացած է այն խնդիր Կրօն. ժողովոյ հա-
մար :

Պատկառելի ժողովոյդ նախորդ նստին՝
երբ Փոսիդեան Ստեփան է՛Ք. կը սրահանջէր
որ Կրօն. ժողովն մտաբանան Համարատու-
թիւն բերէ ամուսնական խնդրոց , նշանակ-
մամբ յականէ՛ յանուանէ , յայտարարեցի յԱ-
տենի ժողովոյս որ անհնարին էր այդ , և թէ՛
ոչ Երեսփոխանաց սրահանջումն , ոչ իսկ ժո-
ղովոյդ որոշումն կարող են ներգործել այս մա-
սին ո՛ր եւ իցէ Կրօնական ժողովոյ վրայ : Եւ
զիտէ՞ք ինչու համար . — վասն զի ընտանե-
կան գաղտնիքներ են ամուսնական խնդիրք .
խոստովանութիւններ՝ զորս չեն կրնան մեզնէ
խլել և ոչ իսկ հզօր Պետութեանց սուխնքն և
թնդանօթք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — (Ընդմիջելով) Մի՛թէ
մի և նոյն նախանձախնդրութեամբ պատրաստ
էք պաշտպանել Հայաստանեայ Եկեղեցւոյ
բոլոր նախական իրաւունքները :

Տ. Խ. ԱՐՔ-ԵՊՊՍ. ՆԱՐ-ՊԷՏ. — (Պատաս-
խանելով) Այո՛ , մինչեւ ցճեղումն արեան :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՅ. — (Ընդմիջե-
լով) Պիտի տեսնե՞ք :

Տ. Խ. ԱՐԲ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ — (Պատաս-
խանելով) Վստահ եղիր ձեր կրօն. ժողովոյն վը-
րոյ , վստահ եղիր ձեր եկեղեցականաց վրայ ,
Տեա՛րք Երեսօրհանք : Նոյն եկեղեցասիրու-
թեանն և ազգասիրութեան նոր ակացոյցնե-
րու պէտք չունիք :

Փառազեան Ստեփան է՛՛՛. ամուսնական
ինչորոց վիճակագրութիւն մը խնդրեց ի կրօն.
ժողովոյ : Զայն առաջարկութիւն բանաւոր
դատեց կրօն. ժողովն Ստեփան հարկ է ծանու-
ցանեմ որ տալ զլի ու լի վիճակագիր ամուս-
նական խնդրոյ՝ ոչ եթէ կը պատկանի կրօն-
ժողովոյ , յորոյ Ատեան համեմատարար սա-
կաւագոյնք միայն կը ներկայանան յայնպիսի
խնդրոյ , այլ՝ ի Գատաւտանական Խորհրդոյ ,
որոյ առջեւ կուգան նախապէս ամեն ամուս-
նական խնդիրք , և ուր՝ կը լուծուին ամենա-
մեծապէն մասամբ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — (Ընդմիջելով) Ին-
չո՞ւ ուրեմն կըստի թէ՛ ձերօն. ժողովն ամուս-
նական խնդրոց քննութեամբն զրոգեցուս :

Տ. Խ. ԱՐԲ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ — (Պատաս-
խանելով) կրօն. ժողովը կը զբաղի այն ամուս-
նական խնդրովք և եթ որոյ կրօնական մասը
Գատաւտանական Խորհուրդն իւր ձեռնհասու-
թեանն վեր նկատելով , կը ներկայացնէ առ
կրօն. ժողովն : Բայց երբ խնդիրը բազարա-
կան բնութիւն ունի՝ կը ներկայացնէ Քաղա-
քական ժողովոյ : Իսկ երբ խտան բնութիւն
ունի ամուսնական խնդիրն , յայնժամ Գա-
տաւտանական Խորհուրդն կը ներկայացնէ զայն
Խառն ժողովոյ . ինչպէ՛ս նաև՝ երբ Գատաւ-
տանական Խորհրդոյ տուած վճռոյն զէ՛մ բողոք
լինի , և վերաբնութիւն պահանջուի մէկ կամ
միւս կողմէն :

Սոյն բացատրութիւններէն տկն յայտնի

կը տեսնէք՝ որ եթէ որոշուի մի ընդհանուր
վիճակագրութիւն խմբագրել ամուսնական
խնդրոց վրայ , պէտք է դիմել ոչ միայն առ
կրօն. ժողովն , այլ եւ՝ առ Քաղաքականն , առ
Խառն ժողովն , և առաւելագոյն՝ առ Գատաւ-
տանական Խորհուրդն , որոյ անընդմիջական
ձեռնհասութեան կը վերաբերին ամենայն դա-
տական որով և ամուսնական դատից խնդիրք ,
ըստ Սահմանադրութեան :

Եղան Երեսօրհանք՝ որ պահանջեցին ի
կրօն. ժողովոյ՝ Ամուսնական Սրինոց և զա-
տախարութեան եղանակի պատրաստութիւնն :
Այլ եւ այս պահանջումն , անտեղի է. նախ՝ ոչ
բովնեալ , ինչպէ՛ս ըսի , Գատաւտանական
Խորհրդոյ կը վերաբերին ի բնէ ամեն դատա-
կան և ամուսնական խնդիրք , և ոչ եթէ
կրօն. ժողովոյ : Երկրորդ որ կրօն. ժողովն
օրէնսդիր մտածին մի չէ , և երրորդ՝ ոչչպիսի
օրէնք մի խմբագրեն բնականաբար Գատաւ-
տանական Խորհրդոյ անկ է , որ պէտք է ներ-
կայանէ զայն առ Խառն ժողովն . և Սա՛ յետ
քննութեան մատուցանէ առ Ազգ. Երեսօ-
ր ժողովն , ի բնութիւն և ի վաւերացումն : Զի
Ազգ. ժողովն և եթ ունի օրէնսդրական իշխա-
նութիւն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՅ. — (Ընդմիջելով)
Իրաւունք ունիք , այդ աշխատութիւն Գա-
տաւտանական Խորհրդոյ կը վերաբերի :

Տ. Խ. ԱՐԲ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ. — (Շարու-
նակելով) : Ոչ ընդհատ անտեղի է հարուածել
զկրօն. ժողովն նաև ազգային կրօնաց վերա-
րելումար . վասն զի և կտակը՝ չեն ընդ անմի.
Չական զբաղմամբք կրօն. ժողովոյն : Գիտէք ,
Տեորք , որ Սահմանադրութիւնն ազգային
կրօններն յանձնած է մի կառուի Հաղարար-
ձութեան : Երբ յիչ օրէն կառուի և այդ Հո-
գարարձութիւն ի ձեռն Խառն ժողովոյ Ազգ.
կեդր. Վարչութեան , կրօն. ժողովն կը խոս-
տանայ իւրովսանն տալ զպարտաւորաւորած

մղումն, որ ի նպատակ Եկեղեցեաց և Վանօրէից եղևոյ կտակը՝ հասնին ճշդիւ իւրեանց նպատակին : Զի կրօն. ժողովն բաջ կրմբունէ կը տակոյ նշանակութիւնն, նախրակառնութիւնն, և Ազգին ընձեռած բազմութիւ ոգուաները : Ուտօի և գովութեան արժանի կը համարի այն էրեստակաւաններն՝ որ առանձին հոգածութեան նիւթ ըրին կտակաց մեծ և կարեւոր խնդիրը :

Քովելի է նաև Քրիստոստուր Էֆէնտիկ կրօնի ուսուցման մասին ցոյց տուած եւանդը : Բայց երբ անցեալ նստին յայտնեց յատենի ժողովոյ թէ կրօն. ժողովոյ քննիչք չեն զըտ. նուած ի քննութիւնս դարոյցոյց Սասնոթիոյ և Մարրի դիւղի, ևս յետոյ քննութիւն բացի, և որտիս եղայ տեսնելով որ նոյն դարոյցման գտնուեր են ի քննութիւն կրօնագիտութեան Տ. Յակոբ, Տ. Յովհաննէս և Տ. Գլորգ վարդապետք :

Այլ Քրիստոստուր Էֆէնտիկ պէտք է հաւատայ թէ իրմէ ո՛չ պակաս, այլ յոյժ առաւել ցաւ կը զգայ կրօն. ժողովն, տեսնելով թաղային Գարոյցոյ Հոգաբարձութեանց ոճանց կարեւոր անհոգութիւնն ի մասին տանուգման երեստիկ ուսումնոյ : Կան թաղեր՝ որոյ զըտ. րոցայ մէջ իսպառ բարձի թողի եղած է կրօնագիտութիւնն : Կան Հոգաբարձութիւններ՝ որ տարւոյն երեք չորրորդը՝ կրօնագիտութեան դասատու չունին : Իսկ երբ քննութեան ամիսն կը մտենայ՝ յայնժամ ևեթ փոյթ կը տանին դասատու մը բռնել, որպէս զի քննութեան պահուն կարեանց ցոյց տալ թէ կրօնագիտութեան դաս եւս կայ վարժարանին մէջ : Սակայն Հոգաբարձութեանց և թողական Խորհրդոց ամենամեծ մասը՝ կրօնագիտութեան ուսումն անչափ թեթեւ և անկարեւոր բան մը համարած են, որ դեռակիրթ անձի մը յանձնած են նորուն դասատուութիւնը, անընչաճ գումար մը յատկացուցած լինելով Քրիստանէական կրօնի ուսուցմանը :

Այս, Տեարք, երբ խնդիրը Ֆրանսերէի, Բնագիտութեան, Զափագիտութեան ևն վրայ է, Հոգաբարձութիւնք ամենէն ընտիր դասա-

տուն կը ջանան ձեռք բերել, և պէտք եղած դրամական զոհորութիւնն ընել ևս՝ չեն վարաւիր : Կը գովեմ նոցա ջանքը : Սակայն ինչո՞ւ երբ խնդիրն կրօնագիտութեան վրայ է, ոչ միայն խնամ՝ չեն տանիր ընտրութիւն ընելու ուսուցչին՝ որ ըստագոյնը լինի, այլ և ոչ իսկ կողմն միւս ուսումնոց դասատուին համար տըրուած ամստիանին չէ թէ հասասարն, այլ և ոչ իսկ կէտը տալ :

Այսպէս ա՛հա Հայոց Եկեղեցին է որ թագային վարժարանները կը սրահէ և կը սնուցանէ, բայց նորա կրօնի ուսուցմանն համար կը զըտուի արժանուոր վարժագետն և թուշակը : Ի՞նչ բան զոչոյ ցաւալի և անիրաւ զըտ. կողութիւն :

ԶԱՅՆԵՐ. — Իրաւունք ունիք . . . շատ ցաւալի բան :

Տ. Ն. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ. — (Շարունակելով) Բայց ունի ցաւալին ըսեմ : Հոյ եկեղեցւոյ ընձեռած դրամն որ աղահարաբ կը զըտուի յուսումն Հոյ կրօնի, չը զըտուի այն դասատուին՝ որ Հոյ Եկեղեցւոյ զաւակը չէ, որ օտարացած է անկէ : Ահա Մայրաբուղբիս առաջնակարգ թաղի մը նախակիրթ բանաց տեսչութիւնը կը յանձնուի Բողոքական Հայոց մը . . .

ԹԱԴԵՆՍԵԱՆ Ռ. ԷՅ. — (Ընդմիջելով) Ո՞ր թաղն է այն, Սրբազան :

Տ. Ն. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ. — (Պատասխանելով) Ինչ հարկ անուան. իրաւութեան նայեցէք, որ . . .

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — (Ընդմիջելով) Ինչո՞ւ կը սրահէք անունը, Սրբազան . Բերայի թաղն է այն :

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՅ. — Եւ կործեմ թէ

Քաղ. ժողովոյ վսեմ. Ատենապետն՝ և այս թաղին Թաղական Խորհրդոյն Ատենապետն է :

Տ. Խ. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ. — (Շարու-նակելով) Ոչ ընդհատ ցաւալի իրողութիւն մի է, որ տարիչ նշանաւոր թաղի մը երկսեռ վարժարանաց տեսչութեան կը կոչուի ուսուցիչ մը որ Ատուածաշնչի վարդապետութեան հակառակ կերպով կը ներկայացնէ մարդկային ազգի սերնդեան պատմութիւնն : Ի՞նչ ընէ կրօն. ժողովն այսպիսի . . .

ԲԱԶՄԱԹԻՒ ՁԱՅՆԵՐ. — Պէտք է պաշտօնանկ ընէլ այդպիսի Հոգաբարձութիւնները :

Տ. Խ. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ. — Միթէ կուտայ ժողովը այդ իրաւունքն կրօնական ժողովոյ :

ԲԱԶՄԱԹԻՒ ՁԱՅՆԵՐ. — Ո՛ւր արդէն այդ իրաւունքն . . . Այո՛, այո՛ . . .

Տ. Խ. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ. — կրօն. ժողովոյ մեծագոյն միւլթարութիւնն է տեսնել Պատկառելի ժողովոյդ այն նախանձախնդրութիւնն Հայաստանեայց Եկեղեցւոյ կրօնից ուսման, և աշակերտոյ՝ մտքոր սկզբանց աւանդմանը վրայ :

Տեսո՛րք Երեսօխանք, ձեր այն եւանդը առաւել յոյժ կը բաջլուրէ և կողբուրէ զիրօնական ժողովս, քան այն շնորհակալութեան քուէն որ առաջարկուեցաւ տալ ժողովոյն : Երեսօխալ մի լինիք մեզ . զի մեր պարտքը կատարելիք : Այլ օղնեցէ՛ք մեզ ձեր հզօր աջակցութեամբն և իմաստուն խորհրդոյք, զորս զլտե՛մք զճաշատեղ լիովին : Սոյն բարոյ յակոն նպատակն հետ, կը սպասեմք Ձեռնէ և զնիւթական նպատակ : Բուէարկեցէք վաւթով Բաշանայացւոյ ընծայարանին համար խընդրուած գումարը, որպէս զի բացուի այսպաղ այն հաստատութիւնն որ պիտի շնորհէ Մայ-

րաքաղաքին արժանաւոր և ընտիր քահանաներ, և Եկեղեցւոյ փայլը պիտի առաւելու յոյժ զգալապէս :

Գալով 25,000 դաճեկանի գումարին՝ զոր անցեալ տարի քուէարկեցիք, և որ ոչ այն ժամանակ տրուեցաւ ժողովոյս, և ոչ այս տարի կը շնորհուի, Տեսո՛րք Երեսօխանք, վաւթուցէ՛ք այնպիսի գործնական եղանակ մը հնարել՝ որ ձեր շնորհած վարին անուանական ջլինի, ինչպէս եղաւ մինչև ցարդ դժբաղդարար :

Կեդրակացընեմ, Տեսո՛րք, ըսելով . երբ թողուք ձեր կրօն. ժողովն առանց դրամոյ, պիտի շունեարկ իրաւունք իրմէ սպասել ոչ աւելի գործեր, ոչ տեղի մեծ և ազգաշահ տնորինութիւններ : Ձի ամենայն խորհուրդք և ձեռնարկք զրամով ի գլուխ կեղնեն, որպէս քաջ գիտէք : Յիշեցէ՛ք որ մեր Եկեղեցւոյ դէմ լը միջին այլը՝ առատասիրու գումարներով : Նոցա դէմ ի՞նչպէս կարող է ձեր կրօն. ժողովն պատերազմիլ ձեռնուեայն և անդրամ :

Ձեր լուրջ և ազգասէր մտայ և արտից կը թողում սպաստանակ :

ՁԱՅՆԵՐ. — Գոհունակութեան քուէ կառաջարկեմք :

ԱՏՆԱՊԵՏ ԷՑ. — Ժողովը զՏէր Խորէն Սրբազան լսելէ յետոյ, բուէի կը գնեմ կրօն. ժողովոյ Համարատուութեան Տեղեկագիրն :

Հետևորար քուէարկութիւն կատարուելով, ժողովն միաձայնութեամբ գոհունակութեան քուէ կուտայ Ազգ. Կեդր. Վարչութեան կրօն. ժողովոյ 1884 ամի բարբոր պաշտօնավարութեան մասին : Եւ ԿՈՐՈՇԷ միանգամայն որ այս սովիւ Երեսօխանաց տնայ կողմանէ ներկայացուող մի քանի օգտակար առաջարկներն հարողուին առ կրօնական ժողովն ի նկատաւնն :

Ատեանն կը վերնայ ժամ Յին, յաջորդ Նիսան 8 օրէն ի զոնիակ գումարելու որոշմամբ :

Ատենագլխի և Ատենագլխտ
Տ. ԳՈՒՐԳԵՆ Տ. ԵՌՈՍՈՒՅԵԱՆ

Ն Ի Ս Տ Թ.

13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1883

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԵԿԵՆՅԵԱՆՔ

Ա. Վիճակ

- 1 Սիմէօն Եպս. Սէֆէրեան Բ
- 2 Արիստակէս Եպիս. Գերձակեն Բ Պ
- 3 Գէորգ Վրդ. Իւթիւճեան
- 4 Խաչատուր Գահ. Տ. Գարրիէլեն Բ

Բ. Վիճակ

- 5 Խորէն Արքեպիսկ. Նար-Պէյ
- 6 Մատթէոս Եպս. Իզմիրլեան Բ
- 7 Յովհաննէս Քահ. Մկրեան
- 8 Գրիգոր » Աճէմեան Բ Պ

Գ. Վիճակ

- 9 Յակոբ Վ. Ա. Փափազեան
- 10 Խորէն Քահ. Փէչիլիճեան Բ Պ
- 11 Ոսկի Քահ. Օհանեան
- 12 Յովհաննէս Քհյ. Նաչպազեան

Դ. Վիճակ

- 13 Եղիշէ Վրդ. Այվազեան
- 14 Յովհաննէս Վ. Արշարունի
- 15 Սահակ Քհ. Տ. Սարգսեան
- 16 Վահան Քհյ. Գրիգորեան

Ե. Վիճակ

- 17 Յովսէփ Վարդ. Այվազեան
- 18 Գարեգին » Թաթարեան Բ 3
- 19 Սուքիաս Քահ. Ստեփանեան Բ
- 20 Գարրիէլ » Խանճեան Բ

- Բ Բաղակալութիւն առաջին :
- 2 » Երկրորդ :
- Պ » բանաւոր պաճառու :

ՇՈՒՄԵՐԱՆՔ

Ա. Վիճակ

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ, ԿԵՒԻԼ-Փաշա-
ԵՆ ԳՈՒՄ-ԳԱՐՈՒԻ ՂՈՒՐԱ

- 21 Յակոբ Գուրգէն
- 22 Յ. Մէրէմ-Գուլի
- 23 Մինաս Չերազ Բ Պ
- 24 Խաչիկ Կամարական
- 25 Միհրան Վարդազարեան
- 26 Մկրտիչ Կիւրճեան
- 27 Երամ ձեռնաղեան
- 28
- 29
- 30
- 31
- 32
- 33
- 34
- 35
- 36
- 37

Բ. Վիճակ

ՊԵՂԻՔԱՅ

- 38 Բարսեղ Հալաճեան Բ 2
- 39 Յովհաննէս Քէրէտէճեան
- 40 Մելքոն Պարոնիկեան Բ Պ
- 41 Եհնի-Գարու.
- 42 Մարուկէ Յրէնիկեան Բ
- 43 Պօղոս Էնքէրճեան Բ 2
- 44 Յակոբ Պօնակեան Բ
- 45

ԻՆՍԻՒՒՏԱՐ Ս. ԽԱԶ

- 45 Սիմէօն Ֆէլէկեան Բ Պ
- 46 Գարրիէլ Նորատուճեան

- 47 Գասպար Գասպարեան Բ
- 48 Գրիգոր Չիթճեան Բ

ԻՆՍԻՒՒՏԱՐ Ս. ԿԱՐԱՊԵՏ

- 49 Պօղոս Թորգոմեան Բ
- 50 Տրդատ Փափազեան Բ
- 51 Յակոբ Հաճիեան Բ Պ
- 52 Միհրան Սէթեան Բ Պ

Գ. Վիճակ
ԳԱՍՐՄ-ԲԱՂԱ

53

ԲԵՐԱ

- 54 Գրիգոր Սէլիմլիճեան
- 55 Ղազար Հովուեան
- 56 Յարութիւն Պէլեան
- 57 Նշան Պօյաճեան
- 58 Վիլիս Օրմանեան Բ 2
- 59 Սինեբերիմ Մանուկեան Բ 3
- 60 Համբարձում Մազպուլե. Բ 3
- 61 Մանուկ Ասլանեան Բ
- 62

ՄԻՂԱՊԻՂ

- 63 Տիրան Եուսուֆեան Բ 2
- 64 Մկրտիչ Գաղանճեան Բ 2
- 65 Մկրտիչ ձանրմեան Բ 3
- 66 Ստեփան Տամատեան
- 67 Յարութիւն Նորատուճե. Բ Պ
- ՊԵՂԻՔ ԵՆ ՂԱՅԱՔԻԱ
- 68 Միքայիլ Մամիկոնեան Բ


Գ. Վիճակ

ԳՈՒՂՈՒՆՃԱՆՊ ԵՆ ԻՃԱՍԻԿ

- 69 Մկրտիչ Մէղպուրեան Բ
- 70 Սիմէօն Մաշտոտեան Բ Պ

Գատըզիւղ	ԳՈՒԱՌԱՎԱՐՆ ԵՆՏՓՈՒԱՆՔ	Նիկոմիդիա
71 Գառնիկ Յովակիմեան		120 Կարապետ Ս.Իւթիւճեան Բ 3
72 Կարապետ Հաղարեան Բ Պ	Ա. Վիճակ	ԱԿԵ
Նարլը-Գարու	2մշկածագ	121 Յակոբ Գորեան Բ
73 Մինրան Տէօքմէճեան	401 Գաղատիա	Ղարանիսար
Եհնի-Մանալիկ Սամարիոյ	402 Ատանա	122 Կարապետ Երէջեան
74 Թօփ-Գափու	403 Սղերդ	123 Կարապետ Խաչիկեան Բ 3
75 Յարութիւն Թիրեաքեան	104 Մատթէոս Ալէքսանեան	Բաղէշ
Էլուպ Ս. Եղիա Է. Ս.	Եօզղատ	124 Արվիար Արիարեան
Աստուածածին	405 Մալաթիա	Գ. Վիճակ
76 Գուրու-Չէլմէ	406 Գէորդ Վարդանեան	Թերիտաղ
77 Կարապետ Սրովանեան	Եզմիր	125 Տիգրան Գ. Սինանեան Բ Պ
Հիսար Է. Պոլաճի-Գիւղ	407 Պօղոս Տրլպէրեան Բ	Կեսարիա
78 Նոր-Գիւղ Է. Սրեհիա	Եգիպտոս	126 Խարբերդ
79 Սէպուհ Տէմիրճիպաշեան	408 Աբրահամ Մուրատեան	Պալքէսեր
Պալատ	Բ. Վիճակ	128 Ստեփան Գօլօլեան
80 Մկրտիչ Կիւմուշեան Բ 2	Պրուսա	Մուշ
81 Ռեթէոս Թաղէոսեան	409 Քրիստոստուր Դաղարոսեան	129 Ստեփան Փափաղեան
82 Ներսէս Երէջեան	Եւդոկիա	Տիվրիկ
Քարակեօմրիւկ	410 Ամասիա	130 Նշան Գարազաշ
83 Յովհաննէս Թորոսեան	411 Համբարձում Ալաճաճեան	Զէյթուն Է. Մարաշ
84 Կարապետ Փանոսեան Բ	Բալու	Տրապիզօն
Ե. Վիճակ	412 Եղեսիա	Ե. Վիճակ
Սամարիա	413 Յակոբ Իւթիւճեան Բ Պ	Պաղտատ
85 Յակոբ Արշակ	Մանգրլըխ	133 Կարապետ Սէթեան
86 Յովհաննէս Նուրեան	414 Հաճըն	Տիգրանակերտ
87	415 Երզնկա	134 Մինրան Զօպանեան
88	416 Ռեթէոս Պէրպէրեան	Վան
89	Գ. Վիճակ	135 Մարկոս Աղաբէգեանց
90	Կարիճ	Աղբամար
91	417 Աերովբէ Ազնաւորեան	436 Հայեպ Է. Այնթապ
92	Քեօթանէա	Սեբաստիա
93	418 Աւետիս Թընկրեան	138 Մկրտիչ Յ. Մէլիբեան
94	Աղրիանուպօլիս	Ռուսնուգ
Խաւզիւղ	419	139 Բաբերդ
95 Ռուբէն Պուլիուրեան		440
96 Նիկողոս Թիւլպէնաճեան Բ Պ		
97 Նշան Փափաղեան Բ 2		
98		
99		
400		





ԱՉԴԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՆԴԱՄՔԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Տ.	Խորէն	Արքեպս.	Նար—Պէյ	Ա. Արեւադէր
2.	»	Սիմէոն	Եպս.	Սէֆէրեան	Բ. »
3.	»	Մատթէոս	»	Իղմիրլեան	
4.	»	Գարեգին	Վրդ.	Թաթարեան	
5.	»	Վահան	»	Տ. Մինասեան	Ա. Արեւադէր
6.	»	Տաճատ	»	Ոսկանեան	Բ. »
7.	»	Յակոբ	»	Ա. Փափազեան	
8.	»	Յովհաննէս	»	Արշարունի	
9.	»	Յովհաննէս	Քհյ.	Մկրեան	
10.	»	Սահակ	»	Տ. Սարգսեան	
11.	»	Սուքիաս	»	Ստեփաննեան	
12.	»	Գրիգոր	»	Աճէմեան	
13.	»	Խորէն	»	Փէշիվանեան	
14.	»	Կարապետ	»	Սէթեան	

ԱՆԴԱՄՔԻ ՔՍՂԱՔՅԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Յովհաննէս	Էֆէնտի	Նուրեան	Ա. Արեւադէր
2.	Գարրիէլ	»	Նորատունկեան	Բ. »
3.	Համազասպ	»	Պալլարեան	Ա. Արեւադէր
4.	Յովհաննէս	»	Պոյաճեան	Բ. »
5.	Արիկ	»	Ունճեան	
6.	Ալիքսան	»	Սարաեան	
7.	Խաչիկ	»	Կամսարական	
8.	Կոստանդ	»	Կոստանդեան	
9.	Միհրան	»	Սէթեան	
10.	Յակոբ	»	Ֆրէնկեան	
11.	Սերովբէ	»	Կիւլպէնկեան	
12.	Սինեքերիմ	»	Մանուկեան	
13.	Տիգրան	»	Բարաղամեան	
14.	Տիգրան	»	Կիւմիւշկէրտանեան	

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. — Բացակայութիւնք .
2. — Վաւերացումն Զ. Է. եւ Ը. նիստերու ատենադրութեանց .
3. — Յայտարարութիւն Ազգ. վարչութեան .

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Համարատուութիւն կրօն. Ժողովոյ . (Շարունակութիւն վերջին ճարանգրութեան) .

